

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱՁԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՊԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆ ԴԱՐԱՆՆԵՐԸ

Կ. Պալիս հրատարակուող «Բիւզանդիոն» թերթը
 գեկտեմբեր 19 ի թիւին մէջ կը հաղորդէր Էջմիածնի գան-
 ձարանէն 200,000 բուլղիի գողութեան մը լուրը: Տե-
 դեկտեմբերը կուգային Դաւրթէն, այնպիսի մանրա-
 մասնութիւններով որոնք ճշմարիտ ըլլալ կը թուէին: Կա-
 թողիկոսին եղբորորդին իբր պիտակը ամբաստանեալ, ու
 Վահան եւ Նահապետ վարդապետները իբր մեղսակիցներ
 հեռացուցուցին Մայր-Աթոռէն, առաջինը թիֆլիս, եւ
 միւսները Ռուսիոյ ներքերը տարուելով:

Նոյն թերթը յաջորդ օրը վերագտնաբերով այսինպիսին
 կը պահանջէր որ «նայն իսկ Մայր-Աթոռոյ կողմէ սրոշի
 «մանրամասն բացատրութիւն մը հաղորդուի» «ի բու-
 «ժուսն գայթակղեալ մտաց» ըստ նուիրական բանաձեւին
 «որ մա՛նաւանդ այս պարագային մէջ պէտք է նշանակու-
 «թիւն մ'ունենայ»:» Արդար պահանջում:

Կ. Պալսոյ սրիշ թերթ մը այս գողութեան գէպը
 կասկածի ենթարկած ըլլալով, «Բիւզանդիոն», թէեւ իր
 թղթակցին պատմութեան հերքումին փափաքող, բայց եւ
 այնպէս կը յայտարարէ թէ «Էջմիածնի գործերն ի Դաւ-
 «րթէմ այնքան ճիշտ կ'իմացուին սրբան ի Կ. Պալիս, մա-
 «նաւանդ երբ հոկտեմբերի մէջ սեղի ունեցած են եւ նա-
 «յեմբերի վերջը կը գրուին Դաւրթէ: Գրողն ալ ծանօթ
 «անձնաւորութիւն մ'է, որ Էջմիածնի գործերուն վրայ
 «գիտմամբ ծուռ բան մը գրելու պէտք չունի բնաւ:»
 Ու կը վերջացնէ ըսելով. «Կը սպասենք այս խորհրդաւոր
 «գործին վրայ աւելի սրոշ տեղեկութիւններու:» — Ասոնք
 ալ աղէկ:

Բայց ահա գեկտեմբեր 27ին հոլը կը փոխուի. «Էջ-
 «միածնի գէպերուն առթիւ, կ'ըսէ «Բիւզանդիոն», յիշա-
 «տակութեան արժանի կ'համարինք որ Ս. Հայրապետը
 «կը խորհէր եպիսկոպոսութեան բարձրացնել Սինոդի ան-
 «գամ եւ դանձապետ Տ. Վահան վարդապետ, եւ իր (կա-
 «թողիկոսին) քարտուղար Տ. Նահապետ վարդապետ.
 «բայց անոնք կառավարական տհաճութեան առարկայ եւ
 «զած ըլլալով, այս փափաք պիտի չիրագործուի այս
 «անգամ:» Եւ որովհետեւ Սինոդի ութ անդամներէն հին-
 «գը պակաս են, «Բիւզանդիոն» կ'եզրակայնէ թէ «Հայ-
 «րապետին յարմարագոյն երեւցած մի քանի ընտրելիք

«ս' եւ կերպով հեռացած կը դանուին Էջմիածնէն:» «Բիւ-
 «զանդիոն» սակայն չըսեր թէ որոնք են «հեռացած մի
 «քանի ընտրելիք»: Չենք կարծեր որ Պ. Խորէն Խորիմեան,
 սրբան սր ալ կաթողիկոսութեան անանջատ մաս, բայց և
 այնպէս կարենայ Սինոդի անգամ նշանակուիլ իր «պա-
 «րոն» ի ախարստով. Վահան վարդապետ արդէն այդ պաշ-
 «տօնը կը վարէ, սրբին «մի քանի»ն Նահապետ վարդա-
 «պետն է, ինչ որ ենթադրել կուտայ թէ այս աշխարհս կը
 «գերազանցէ երկինքը. հոս «մի անձն եւ հինգ բնութիւն»
 կայ:

Այս ամէնուն հեռեւանքը: Ահաւասիկ ըստ «Բիւ-
 «զանդիոն» ի. «Սեպրակեանց եպիսկոպոսի հետ Մշակա-
 «կանց հակառակ են արդի Հայրապետին եւ անոր հա-
 «մակրութիւնը վայելող եկեղեցականներուն: Կուսակցա-
 «կան ազատ խաղ մը կ'երեւի բոլոր գործին մէջ:»

Շատ ճիշտ է. կուսակցական ազատ խաղ մը կայ,
 միայն թէ «Բիւզանդիոն» ի մէջ պէտք է վնասել գայն:

Սեպրաքեան Արիստակէս եպիսկոպոսը կովկասի հայ
 եկեղեցականութեան ամենէն յանձնարարելի գէղերէն
 մէկն է, եւ կաթողիկոսութեան էն հաւանական ընտրելի-
 ներէն. եւ որովհետեւ կը պատկանի յառաջդիմական,
 այսինքն «Մշակ» ի կուսակցութեան, սրբին պէտք է եւ
 պիսկոպոսն ալ, «Մշակ»ն ալ արատաւորել: Թիւրքիոյ
 հայկեր այսպէս թէ այնպէս զօրաւոր ձայն կրնան ունե-
 նալ ապագայ ընտրութեան միջոցին, ինչպէս 92 ի ընա-
 ըութեան ունեցան, ուստի եւ Թիւրքիոյ մէջ իսկ պէտք է
 Սեպրաքեան եպիսկոպոսին եւ «Մշակ»ին ու անոր կու-
 սակցութեան վարիը կոտրելու աշխատիլ: «Կուսակցա-
 «կան այս ազատ խաղին» 1891 էն յետոյ միջնորդը
 եղաւ ջնջուած «Արեւելք»ը, եւ հիմա անոր յաջորդող
 «Բիւզանդիոն»ը:

Թիւրքիոյ հայ եկեղեցականներէն ոմանք տարիներ
 առաջ կովկաս այցելած ատեննին տեսալ մը արհամար-
 հանքի առարկայ դարձան որովհետեւ «կուսակցութիւննե-
 «րը հաշտեցնելու» փափազ յայտնած էին: Երբ որ ար-
 համարհանք չինայուեցաւ այդ եկեղեցականներուն որոնք
 «կուսուրայից» զուրկ ըլլալու ապացոյցը կուտային կու-
 սակցութիւններու ջնջումին հետապնդելով.

— Առանց կուսակցութեան միթէ հանրային կեանք
 կը լինի:

Մեր խեղճերը չէին գիտեր թ'նչ պատասխանել. «կու-
 սուրական» ամէն զօրաւոր փաստի մէկ պատասխանն ու-
 նէին, բնազդին ներշնչած պատասխանը.

— Կուսակցութիւնը գէշ բան է :

Կ. Պոլսեցի եկեղեցականները կուսակցութիւն ըսելով կ'ըմբռնէին « հայերու համախմբում մը որ հայերու « ուրիշ համախմբումի մը պատկանողները զրպարտելու, « անպատուելու, կործանելու կ'աշխատի : » Ընդունինք թէ բոլորովին սխալած չէին :

« Կուսակցութեան » ստեղծողը Կովկասի մէջ Գրիգոր Արծրունին եղաւ : Քարոյականի տէր մարդ, գաղափարի ծառայող, ստորնութեան անընդունակ, տաղանդաւոր հըրապարակագիրը իր շուրջը բոլորեց նորածիլ երիտասարդութիւնը եւ հիմնեց « յառաջդիմական կուսակցութիւնը » իր համբաւաւոր « Մշակ » ուղը : Եւ ահա այն բոլոր ապականութիւնները որոնք մըլոտութեան մէջ սնունդ կ'առնէին, վրդովեցան իրենց շահաւէտ հանգստութեանը մէջ, ու միարանեցան սողունի կոխը մղելու « Մշակ » ի ե իրեններուն ստեղծեալ : Քառորդ դար մըն է որ Ռուսաստան, Պոլիս, Իզմիր գարշանքի ծայթը մը չի դադրիր « Մշակ » ի եւ անոր սպայակոյտին դէմ :

Եւ սակայն այս աղտոտութիւններուն մէջէն Գաղափարի կուսակցութիւնը մաքուր եւ ջինջ վեր կը բարձրանայ, վասն զի « Մշակ » թէեւ շատ անգամ ծայրայեղ, ընդհանրապէս բուռն ու խիստ, բայց մաքուր մնաց. անուզսք եղաւ, անգութ հանգիստացաւ, սակայն երբեք չստեղծեց, երբեք չզրպարտեց հակառակորդ մը : Աս է իր ուժը :

Անհատ մը, կուսակցութիւն մը երբ իր մէջ կը զգայ մեծկակ ուժ մը, ազատ կը մնայ ստորնացող հակառակորդին հետ գէթ անգամ մը անոր զենքերովը չափուելու թեթեւ փորձութենէ մը իսկ : Այդ ուժին գիտակցութիւնը բարոյական անկումի ո՛ր եւ է պատահականութեան դէմ զօրաւոր պահպանն է : Ու ով որ չիյնար կը յաղթանակէ. անոր համար է որ բարոյականութիւնը թէ՛ անհատները եւ թէ՛ ժողովուրդները յաղթանակի կ'առաջնորդէ : Ի՞նչ շքերի Արծրունիին դէմ թիֆլիսի, Պոլսոյ, Իզմիրի ապականութեան պատկանողները որոնք « փողոցային թերթ » կը կոչուին : Հալածեցին այդ մարդը իր ընտանեկան կեանքին մէջ, հայութեան թշնամին հոչակեցին, հայ եկեղեցիին դաւաճանը, հայ ժողովուրդը Ռուսիոյ վաճառող մը : Եւ սակայն իր մահը ազգային աղէտ մը հրատարակուեցաւ. ու երբ կ'ուզենք սիրել եւ յարգել Կովկասի հայութիւնը՝ էն առաջ Արծրունիին պատկերն է որ կը ներկայանայ մեր աչքին եւ կը դրաւէ մեր որտեքը :

Ու Սեւրաքեան Արիստակէս եպիսկոպոսը : Վաճառող մը էջմիածնի իրաւունքներուն, մասնիչ մը պաշտօնակից եպիսկոպոսներուն, դաւադիր մը կաթողիկոսին դէմ, զործիք մը ուսականութեան. ուրիշ : Ու այդ զըրպարտեալը կը մնայ անխռով, առանց մտքէն անցընելու ամենաչնչին զրպարտանք մըն ալ ինք սպրդեցնել իր թըշնամիներուն դէմ : Այսօր սիրելի եւ յարգելի շատ սակաւաթիւ եկեղեցականներէն մէկն է : Կաթողիկոս կրնայ ըլլալ կամ չըլլալ. մեծութիւնը միշտ պաշտօնի մէջ պէտք չէ փնտռել. խիլքը ու մաքուր հոգին ամէն տեղ մարդս կրնան մեծ պահել :

ԱՐԻԻՆԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՐԻԻՆԸ

Արիւ, լուրթ կապոյտ երկնքին վրայ, Վոսփօրը շըրջապատող մութ կանանչ լեռներուն ետին կ'անհետանար : Անոր կարմիր ցլըքերը, արեւմտեան կողմը լուսաւորելով, սակաւ առ սակաւ կը շիջանէին :

Անուշ իրիկուան հանդարտութեան մէջ, բարակ հովսը, ծովուն ընդհանուր տարածութեան վրայ թափառելով, մանր ծփանքներ կը յօրինէր :

Խաւարը տիրեց : Դէմ գէմի լեռները կարծես իրարու մօտեցան եւ վարը Վոսփօրի ամառանոցները պարտէզներու ծառերուն հետ խառնուած՝ ստուերներու ձեւ մը առին :

Արտէմ, ձկնորս Պողոսին աղջիկը, դեռ նոր դարձած զրացի տաճիկ փաշային տունէն, ուր ամբողջ օրը կարի գացած էր, իրիկուան ճաշը կը պատրաստէր իրենց փայտաշէն փոքրիկ սանը մէջ, Պէպէքի բարձրութեան վրայ :

Յանկարծ իրարանցում մը լսուեցաւ : Դուրսը, լեռնի վեր, կիներ ու տղաք կը փախչէին Անգլիացիներուն տուները ապաստանելու :

Աղջիկը աչք մը նետեց պատուհանէն երկնքին թափանցիկ խաղաղութեան, ունորէն դարձաւ իր զբաղմունը, առանց ուշադրութիւն ընելու այդ արտասովոր շփոթութեան :

Սակայն ազօտ լամպարին լոյսը շարժեցաւ եւ Արտէմ դէմը կանգնած տեսաւ Համաի պէյը, փաշային մէկ հատիկ զաւակը, որ պարտէզին բաց դռնէն ներս ստած էր :

Ապշած, երեսը նայեցաւ :

— Արտէմ, ըսաւ երիտասարդը, քալէ փախչի՛նք, աս գիշեր Հայերը պիտի ջարդեն :

Նորատի աղջիկը սարսուռաց :

— Սուլթանը, կրկնեց Համաի, հրաման ըրեր է եւ հայրս պալատէն դառնալուն մեզի իմացուց :

— Ո՞ր է հայրս, պոռաց Արտէմ, ու շուրս վին կը նայէր անձկութեամբ :

— Հայրդ, սրմուց երիտասարդ թիւրքը գրեթէ խնդալով, չե՞ս գիտեր, առաւօտն ի վեր բանսն է : Բայց փաշան զանի կ'ազատէ, հոգը մի՛ ընեք, աւելցուց :

— Ինչո՞ւ բանտը ըլլայ, ազազակեց Արտէմ, ի՞նչ ըրած է ան :

— Քալէ՛, կրկնեց դարձեալ Համաի պէյ, քալէ՛, թիւրքերը հիմա կուգան :

Արտէմ, նուազելու չափ այլայլած, պատին կը կրթնէր եւ անզգալաբար խոհանոցին բաց դռնէն դուրս կը նայէր, ուր պարտէզին ծաղիկները զուարթ կերպով հովուն դէմ կը շարժէին :

— Ինչո՞ւ ձեր տունը գամ, հարցուց :

— Ազատելու՞ համար, պատասխանեց Համաի, ազատելու՞ համար տաճիկներուն ձեռքէն :

Ու ձայնը կահուղցնելով,

— Մեր տանը լոյսը պիտի ըլլաս այսուհետեւ : Հետզհետէ կ'ողբեսուրուեր :

— Արտէմ հանրմ, այսուհետեւ իմ սիրելի կինս պիտի ըլլաս:

Աղջիկը ուշափորոյս կը լռէր: Անոր լուսթնէն բաշալերուելով, միւսը կը շարունակէր.

— Ես շատոնց ի վեր կը սիրեմ քեզի. ան բու սեւ մազերուդ գանգուրները եւ երկայն աչքերդ որ մանուշակի կը նմանին իս խենթ պարձուցին. գիշերները քուն չեմ եղած քեզ մտածելով:

Արտէմ միշտ անշարժ կը մնար. կարծես ոտքերը արմատացած էին գետնին մէջ:

— Արտէմ, ըսաւ դարձեալ Համտի անոր ձեռքէն թոթուելով, բալէ՛ երթանք:

— Ո՛ր, հարցուց աղջիկը բոլորովին խելաթափ:

— Մեր տունը: Հոն եկուր իոյամ եղիւր ու կը փըրկուիս:

Այս խօսքը հայուհւոյն հոգին արձագանգ տուաւ:

— Ես թրքանամ, պոռաց կոնակը պատին տալով, ես հաւատքս ուրանամ: Կորի՛ր ասկէ, կորի՛ր, լի՛րբ:

Երիտասարդը նախատինքին տակ ցնցուեցաւ:

— Արտէմ, ըսաւ բարկութեամբ, լոյս հաւատքը ընդունէ ու կ'ազատիս. հանրմ կ'ըլլաս. եկո՛ւր, հոգի՛ս:

Ու ձեռքէն բռնած՝ կ'աշխատէր զանի դուրս բաշելու:

— Չէ՛, կրկնեց օրիորդը, չեմ գար, թող սպաննեն իս:

— Արտէմ, շարունակեց Համտի աւելի ցած ձայնով մը, եկո՛ւր, քեզ պիտի բռնաբարեն:

— Չէ՛, չէ՛, չէ՛:

Ու ձեռքը անոր ձեռքերէն զատելու համար անգօր շարժումներ կ'ընէր: Մազերը թափեցան եւ ստուերին մէջ աչքերը տարօրինակ կերպով կը փայլէին: Ամբողջ մարմինը կը դողար:

— Ինչ գեղեցիկ ես, ա՛ղջիկ, կը շնչէր թիւրքը:

Բայց ան, ճարահատ, երիտասարդին ձեռքը խածաւ:

— Գնա՛, պոռաց, գնա՛, ա՛լ այս տունէն ներս չմտնես. ո՛վ տուաւ քեզի այս համարձակութիւնը:

Ու ակունները կը կափկափէին:

— Ես տաճիկ ըլլամ, ես տաճիկ ըլլամ, կը մրմոսար:

Երիտասարդը ցափ ազաղակ մը արձակած ու աղջկանը ձեռքը թող տուած էր: Աչքերը վայրագ փայլով մը կը վառէին հիմակ:

— Եթէ չի գաս, ըսաւ սպանալից, քեզ հո՛ս կը մեռցնես:

— Մեռցո՛ւր, պոռաց Արտէմ, մեռցո՛ւր, քնչ կեցեր ես:

Դանակի մը ցոլքը կայծակի արագութեամբ փայլեցաւ, ու երկաթը աղջկանը վիզը մխուեցաւ: Արինը կաթիլ կաթիլ սահեցաւ անոր սպիտակ կուրծքն ի վար: Արտէմ ըսպէ մը աչքերը գոցեց, բայց նորէն բանալով, շեշտակի նայեցաւ իր սպաննիչին. ու բերանը բաց շունչ առնելու կը ջանար:

Իսկ Համտի կարծելով որ իրեն խօսիլ կ'ուզէ, ճակատը անոր ճակտին մօտեցուց ու շրթունքը շրթունքին, ձեռքերէն բռնելով: Նորէն նայեցաւ աղջիկը, ցնցուեցաւ,

ուժով մը հազաց եւ արինոտ թուքը երիտասարդին բերնին մէջը թռաւ:

Համտի գլուխը անդին դարձուց սոսկումով, թող տուաւ անոր ձեռքը եւ Արտէմ գետին ինկաւ անկենդան:

Դուրսը ջարդը կը շարունակուէր:

Շատ ատեն Համտի պէյ Պոլսոյ մէջ շրջեցաւ նիհար ու տոգոյն, ահամայ ու անգաղար հազալով Արտէմի վերջին հազը, որ կարծես իր լանջքին մէջ իջած էր:

Մեռաւ թորախտէն:

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՍՎԱՃԵԱՆ

ՉԷՅԹՈՒՆՑԻ ՏՂԱՅ

Չէյթուն լուծի տակ էր ինկեր՝ նըւանած
Ոչ թէ սըրով կամ արութեամբ թիւրք բաշաց
Այլ մատնութեամբ նենգաւոր.

Ընդդիմաւարտ զայն իշխաններ գաւեցին,
Ոտքը դըրաւ սորին վըրայ Օսմանցին,
Եւ ծագեցաւ գուժի օր:

Ալեգարդ սէգ խրոխտ մարտիկներ բազմախոց,
Ամօթալից, ձեռքէն բըռնած տըղայոց,
Ճամբուն վըրայ կը կային,

Ու պիտենին սիպտակ արցունք կը կաթեն.
Ա՛ն թըշնամին դրօշը կարմիր գոր կ'ատեն
Գլուխը կանգնեց Չէյթունին:

Հրամանատար փաշան նըստած ձի կուգայ,
Կը փողփողին ասպանդակներն արծաթեայ,
Եւ ահա զօրք վաշտ առ վաշտ.

Ետեւէն փող կը փըչէ, ձայն աւելի,
Թըմբուկը խուլ կը զըրզըռէ աւելի
Այս քաջերուն ոխն անհաշտ:

Ու կը նային ամենքն հոգւով շարատանջ,
Երկայնատեւ կանայք, մարդիկ մերկալանջ
Եւ սպառազէն մանկըտին:

Անոնցմէ մին իր հօրն առջեւ կը կենար,
Փոքրիկ տըղայ, աջ ձեռքը յեց կուշան ի վար
Կախուած խոշոր դանակին:

Չայն բարձրացուց, որ փաշային եղաւ դառ.
« Ինչ է, դանա՛կ, ինչո՞ւ տեղէդ կ'երերաս,
Արգեօք տաճի՛կ դու տեսար: »

Թուրքը դողաց: Միւս օր գեռ չէր կարմրեր այդ՝
Փախաւ խըրոխտ քաղքէն ուր նոյն խակ տըղայք
Գիտեն սպաննալ քաջաբար:

ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

.....

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅԵՐԸ

(2)

Հայերը իրենց Եկեղեցին ունին, եւ ան է իրենց ազգայնութեան երաշխաւորութիւնը: Հայ Եկեղեցին յոյն Եկեղեցիէն եւ կաթողիկ Եկեղեցիէն անով կը բաժնուի որ առաջին չորս ժողովները միայն կ'ընդունի: Մինչդեռ արեւմտեան Հինգերորդ ժողովը Քաղկեդոնի մէջ կը վիճէր, անդին Հայաստան իր հաւատքին համար կը պատերազմէր Պարսից դէմ: Ժողովին որոշումներուն մասին հակասական տեղեկագիրներ ստացաւ, ու մերժեց զանոնք: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Եկեղեցիին տուաւ իր կազմակերպութիւնը ու ժամերգութիւնը:

Գերազոյն Հայրապետը, որուն իրաւասութեան տակ կը գտնուին Կ. Պոլսոյ, Երուսաղէմի ու Կիլիկիոյ պատրիարքները, կաթողիկոսն է, որ կը բնակի Էջմիածնի վանքը: Մասին մտ: Ըստ որում Էջմիածին վաթսուներեք ի վեր Ռուսիոյ անցած է, կայսերական կառավարութիւնը ինքզինքին իրաւունք տուած է միջամտելու կաթողիկոսին անուանման գործին: Կը հսկէ ընտրութեան: Աշխարհի բոլոր Հայ թեմերը պատուիրակներ կը զրկեն, եկեղեցական ու աշխարհական. վանքին մէջ տեսայ լուսանկար մը որ արդի Հայրապետը ընտրող պատուիրակները կը ներկայացնէր. մեծամասնութիւնը կը բազկանար աշխարհականներէ, օրագրող ու վաճառական: Քուէարկութիւն կը կատարուի: Ռուսական կառավարութիւնը ինքզինքը պարտաւոր չի համարիր կաթողիկոս հռչակելու մեծամասնութեան ընտրածը. կրնայ ընտրել ամենէն աւելի բուէ շահած երկու եկեղեցականներէն մին: Այսպէս, իր ձեռքին մէջ ունի Հայ Եկեղեցիին պետը. ինք անուանելով զանի, իրենը կ'ընէ զանի եւ օտարէն անկախ: Թիւրքիոյ եւ Պարսկաստանի Հայերը կը տրտնջան այս բանին դէմ. բայց որովհետեւ չեն ուզեր իրենց Եկեղեցիին միութիւնը խորտակել, ուրիշ միջոց չունին բայց եթէ հպատակիլ Ռուսիոյ պահանջումներուն:

Կաթողիկոսէն վար, եպիսկոպոսները ու վարդապետները կան: Այս եկեղեցականները պետք է ամուրի կամ այրի ըլլան: Հայրապետը կ'ընտրէ զանոնք: Իրենց թեմերը կը բնակին, բացի եթէ կաթողիկոսին վստահութիւնը իր մօտ կանչէ զիրենք: Վանքերէն անուանած ըլլալով, ընդհանրապէս վանք մը կը բնակին:

Ստորին կղերը երկու մասի կը բաժնուի. աշխարհական կղերը, ու վանական կղերը: Առաջինը ամուսնացած է, երկրորդը ամուրի:

Հայոց աշխարհական կղերը բնաւ չի նւանիր ոռու կղերին որ, մինչեւ վերջին ժամանակներս, ինք իր մէջէն կ'ընտրէր ինքզինքը ու կրօնական պատկարգ մը կը կազմէր: Հայ բազմաթիւ ընկերութեան ամէն խաւերէն կ'ելլէ: Քահանայութիւնը ընտրութեամբ է: Յաճախ, գեղացիի մը տղան է ան: Դաշաւերուն կատարեալ վայրենութեանը մէջ մեծցած է, հողը մշակելով: Տասներկու տարեկանին մօտ, եթէ տղան քիչ շատ բերում մը ցոյց տուած է Եկեղեցիին գործերուն համար, գեղին քահանայէն կը

ինչորին որ գինքը քովը անէ իրը լուսարար, գպիբ կամ ժամկոչ: Խորանին վրայ քահանային սպասաւորելով, տղան շարականները ու արարողութիւնը կը սորվի: Երբ քսան կ'ըլլայ, աստուածաբանութեանէն բառ մը չի գիտեր. բայց գիտէ պատարագել, մկրտել, կարգել, թաղել: Երբոր քահանան վախճանի կամ քաշուի, կրնայ անոր յաջորդելու ցանկութիւն յայտնել: Գեղացիներուն հաւանութիւնը կը հայցէ. երբեմն ալ կ'երեւայ որ կը գնէ: Եթէ գեղացիները զինքը ընտրեն, թեմական եպիսկոպոսին կը ներկայանայ, որ, յետ ցննութեան, ընտրութիւնը կը վաւերացնէ կամ կը բեկանէ: Եթէ տակաւին ամուսնացած չէ, կը փութայ կարգուիլ՝ ձեռնադրուելէ առաջ: Օծումէն յետոյ, բառասուն օր կ'ապուշտարէ: Ապաշխարանքը կ'աւարտի ինչոյքով մը որու միջոցին երէցկիներ նստած կը մնայ արժողակի մը վրայ, աչքերը կապուած, ակնշնորթ թխմուած, ցոյց տալու համար այն պատկառոտ զիրքը որ պիտի ունենայ Երկանը պաշտօնին նկատմամբ:

Այս նահապետական ժողովրդին մէջ, ուր բոլոր պաշտօնները զեռ կատարելապէս որոշ ու անջատ չեն, քահանան միմիայն խորանին չի պատկանիր: Չի կարծեր որ իր պաշտօնը կը նսեմացնէ՝ պարզ գեղացիի սը պէս հողը մշակելով: Որովհետեւ որոշ թոշակ չունի, պէտք է աշխատի, ընտանիքը ապրեցնելու համար: Եթէ արտ չունի, գեղը իրեն արտ մը կուտայ: Հողին տուած բերքին վրայ, քահանան կ'աւելցնէ ցորենին, զարիին վրայ անուանած տասանորդի մը չնչին հասոյթը: Ասկից դատ, կնունքէ, հարսնիքէ, թաղումէ, անօրհնէքէ ալ կը վաստակի: Վերջապէս, մատաղ եղած ոչխարին մորթը իրն է, ու երբոր մեռել մը թաղէ, անոր հագուստը իր իրաւունքն է: Այսպէս իր հօտէն ընտրուելով ու անկից ապրելով, քահանան բոլորովին անձնուէր է անոր:

Գալով վանականներուն, Հայ աբեղաները, ոռու ամբղաներուն պէս, ինքզինքնին տուած են Հայեցողութեան ու աւանդական ձեւերու կատարման: Իրենց գլխաւոր պաշտօնը կը թուի ըլլալ վանքերուն մասունքները պահել եւ նուէր հաւաքել:

Հայ կղերը Ս. Սինդոնի՝ ոռու Եկեղեցիին վարող ժողովին՝ իրաւասութեան տակ չի գտնուիր: Կաթողիկոսէն միայն կախում ունի: Միայն թէ Հայրապետը կառավարութեան հսկողութեան տակ է: Չարը անոր քով գրած է ութ լուսաւորչական եպիսկոպոսէ բազկացած սինոյ մը զսրոնք ինք կ'ընտրէ, ու այս սինոյին մէջ ալ աշխարհական պրօկուրօր մը կարգած է, կատարելապէս նուիրուած ոռուական շահերուն, եւ որ առիթը չի փախցնէր Հայ Եկեղեցիին կրօնական գործերուն խառնուելու: Հայերը զժուարաւ կը հանդուրժեն այդ պաշտօնատարին միջամտութեանը եւ իրենց Եկեղեցիին կառավարելու ազատութիւնը կը պահանջեն, առանց իշխանութեան հսկողութեանը:

Գիտնալու է որ Հայերը շատ յարած են իրենց Եկեղեցիին: Անոնք իսկ որ գերբնականին հաւատքը կորսնցուցած են, յարգանքով կը վերաբերին դէպի ան, որովհետեւ ազգային հիմնարկութիւն մըն է ան, որովհետեւ ազգային գիտակցութիւնը կը պահպանէ: Անոր վրայ

փոխադրած են իրենց բաժանեալ հայրենիքին համար պահած սերերնին: Կրօնքը այնքան սերտիւ կապուած է ազգայնութեան հետ, որ լուսաւորչական Հայերը իրենզիրենք միակ ճշմարիտ Հայ կը նկատեն եւ կը միայն ուրանալու իրենց եղբայրները, Հոռոմի միացած Հայերը:

Տասներկուերորդ դարէն սկսեալ, հայ լուսաւորչական բաւական վարդապետներ բանակցութեան մտան Հոռոմի եւ Բիւզանդիոնի հետ: 1320ին, Յովհաննէս Խեղիցցի լատին Եկեղեցիին հետ միութեան յարեցաւ: Կաթողիկէ Հայերուն ծագումը ասկից է: Անդրկովկասի մէջ սակաւաթիւ են. 1,000 հայ լուսաւորչականի դէմ 36 հայ կաթողիկէ միայն կայ: Արեւելքի բոլոր կաթողիկէներուն պէս, «Փրէնկ» կ'անուանեն զանոնք: Լուսաւորչականներուն, որոնք անոնց հայրենասիրութեանը վրայ կը տարակուսին, կը պատասխանեն թէ կաթողիկէ Հայերն են, Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեանները, որ հարիւր տարիէ ի վեր ամենէն աւելի եռանդով աշխատած են հայ գրականութեան վերածնութեանը. թէ Ս. Ղազար կղզիին խոնարհ վանականներն են, Չամչեան, Ղեւնդ Ալիշան, որ վերակենդանացուցին Հայաստանի պատմութիւնը՝ չորս դարէ ի վեր մոռցուած: Ռուսիոյ կաթողիկէ Հայերը իրաւունք ունին օգտուելու այն երախտագիտութեանէն որուն արժանացած է իրենց կրօնակիցներուն ընտրեալ մասը: Միաց որ, հաւատարիմ են ազգային գաղափարին, զոր կրօնական պաւանանքի խնդրէն առաջ կը դասեն. իրենց ուժերը անոր արամագրութեան տակ կը գնեն, եւ եթէ Էջմիածնի կաթողիկոսը իբր հոգեւոր պետ չեն ընդունիր, պատրաստ են զանի ճանչնալու իբր «հայկական գաղափարին» ներկայացուցիչը:

Հայերը իրենց գարոցները ունին, զորոնք կզերը կը վարէ: Կաթողիկոսը ինք անձամբ կը վարէ զանոնք կամ անոնց անօրինութիւնը կը յանձնէ ժողովի մը զոր երեք տարին անգամ մը կ'անուանէ: Ինքն է որ ծրարները կը խմբագրէ: Մինչեւ վերջին տարիներս հայ գարոցները կայսերական կառավարութեան հսկողութեանէն զերծ էին. բայց այսօր ուսական վարչութիւնը նուազ զգուշաւորութիւն ու խզճահարութիւն ցոյց կուտայ. սրտած ըլլալով խստիւ առաջ տանիլ իր կեդրոնացման քաղաքականութիւնը, չի կրնար այդ գարոցներուն թողուլ իրենց ինքնավարութիւնը. կ'ուզէ իր լուծին ճկել զանոնք: Պիտի ցցց տանք թէ ինչ խոչընդոտներու կը հանդիպի, ինչ զայրոյթ առաջ կը բերէ:

Թագապին կամ նախնական վարժարանները հոգաբարձու մը ունին զոր թաղը կ'ընտրէ: Բոլոր չափահաս մարդիկը կը մասնակցին ընտրութեան. սեղմիչ պայման չի կայ: Հոգաբարձուն կ'ընտրէ ուսուցիչը: Իր պաշտօնն է մասնաւորապէս գարոցին ելմտական վարչութիւնը, ու համար կուտայ կաթողիկոսին: Իւրաքանչիւր գարոց ըստացուածքներ ունի որոնք նուիրատուութեամբ գոյացած են. հոգաբարձուն կը յանձանձէ զանոնք: Եթէ իր ձեռքին տակ գտնուած հասոյթներով կարելի չըլլայ գարոցը ամբողջովին ձրի ընել, պզտիկ թռչակ մը կը պահանջէ աշակերտներէն: Թեմական կամ երկրորդական վարժարանները մէկ քանի հոգաբարձու ունին, Թիֆլիսի մէջ

տասներկու, Երեւանի եւ Եուզիի մէջ վեց: Պատճառը ան է որ այս վարժարաններէն շատը ահագին կալուածներ ունին. Թիֆլիսի Ներսիսեան վարժարանը, օրինակի համար, տարեկան 100,000 ռուպլի հասոյթ ունի:

Բարձրագոյն կրթութիւնը կը տրուի Էջմիածնի ճեմարանին մէջ, որ սղղակի կաթողիկոսէն կախում ունի: Թիւրքիայէն ու Պարսկաստանէն ալ աշակերտ կուգան հոն: Իր ուսուցիչները գիտնականի համբաւ ունին. մեծ մասամբ նախկին ճեմարանականներ են որոնք, քսան տարեկանին, գացած են իրենց ուսումը աւարտել Գերմանիա կամ Ֆրանսա: Ճեմարանը առաջին տեղը կուտայ աստուածաբանութեան ուսուցման, որովհետեւ եպիսկոպոսոսացունք պէտք է պատրաստէ: Աշակերտները երեք տարի կը մնան հոն. բացի շատ հարուստներէն, ձրիարար կը կրթուին:

Հայերը, վերջապէս, իրենց գրականութիւնը ունին, եւ Թիֆլիսի մէջ է որ, դարուս երկրորդ կէտին, ամենէն աւելի փայլ ունեցած է ան: Գրական շարժում մը ազգային շարժման համընթաց գացած է. Արժրունի եւ Բաֆֆի անոր հոգին եղած են: Հայ հովիտներուն ու լեռներուն մէջ ժողովրդական գրոյցներու ու երգերու հունձք մը քաղել, Հայաստանի գիւղացիներուն կսկծալի կեանքը նկարագրել, ցաւէն երիթացած այդ հոգիներուն ընդարմացումը թոթուել, փառաւոր անցեալի մը յիշատակները մէջ բերելով՝ անոնց արութիւն ներշնչել, աս եղած է Թիֆլիսի հայ գրագէտներուն գործը: Պէտք է սքանչանալ զիրենք ոգեւորող ազնիւ խանդին վրայ:

Հայ գրականութիւնը այսօր նսեմութեան շրջանի մը մէջ է: Սակայն մամուլը մեծ կենսականութիւն ցոյց կուտայ: Գրաքննութեան խտութիւններէն կը նեղուի. կառավարութեան կասկածանքները իրեն կ'արդիւնէն արժարծել ազգային զգացումը, Ռուսիոյ Հայերուն համար աւելի մեծ ազատութիւն մը պահանջել կամ Թիւրքիոյ Հայերուն ի նպաստ հայրենասիրական իրարանցումի մը մէջ նետուիլ: Բայց կրնայ ազատօրէն յուզել ինչ ինչ խնդիրներ, խօսիլ ինչ ինչ հարցերու մասին որոնք Հայերը միայն կը հետաքրքրեն եւ որոնց լուծումը ուս կառավարութեան փոյթը չէ:

Հայերուն մէջ՝ քաղաքական կեանքի մնացորդ մը, կուսակցութիւններ, կամ, եթէ կ'ուզէք, կարծիքներ կան զորոնք մամուլը կը մարմնաւորէ: Ազատականներ կան որոնք շատ գէշ տչքով կը նային պահպանողականներուն եւ անոնց հետ ան ատեն միայն կը համաձայնին երբ խնդիրը ազգային գաղափարին վրայ է: Պահպանողականները ու ազատականները իրարու դէմ կը մարտնչին՝ կրօնական գետնին վրայ: Առաջինները կը միտին ամէն բան Եկեղեցիին ենթարկելու, հայ ընկերութեան մէջ անոր ունեցած ազդեցութիւնը ուժով ցնելու. կը փափաքին որ գարոցներուն մէջ ուսումը աւանդուի կղերէն եւ ոչ թէ աշխարհական ուսուցիչներէ: Ըմբռնելով թէ կղերին ազդեցութիւնը իր մտաւորական ու բարոյական արժէքէն կախում ունի, կը փափաքին որ քահանաները աւելի խոստովեամբ ընտրուին, ընտրուողներուն թիւը սահմանափակուի՝ սեղմիչ պայմաններ հարկադրելով անոնց: Ազատականները չեն ընդունիր Եկեղեցիին միջամտութիւնը

բաղաբային կեանքին մէջ: Կ'ուզեն ազատագրուիլ կրօնական իշխանութենէն: Իբր հայրենասէր, Եկեղեցին կը պաշտպանեն իբր պատնէշ մը. իբր ազատական, անոր գէմ կը յարձակին իբր խոչընդոտի մը:

* * *

Քաղաքական ազատութիւն, իրենց գործունէութիւնը անխափան առաջ տանելու իրաւունք, եւ, եթէ ասիկա շատ պահանջել չէ Ռուսիոյ պէս անթոյլատու վեհապետէ մը, իրենց Եկեղեցիին ինքնօրինութիւնը, կրօնական ազատութիւն, — ահաւասիկ Ռուսիոյ Հայերը ի՞նչ կը պահանջեն իրենց տէրերէն:

Եթէ Ռուսիա իրեն գէմը ունենար միայն Հայաստանի ան խոնարհ գեղացիները որոնց մետտ խրճիթները Մասիսի ստորոտը կը բարձրանան, որոնք ո՛չ գրել գիտեն ո՛չ կարգալ, որոնց համար աշխարհքը կանգ կ'առնէ իրենց հարիզոնին սահմաններուն վրայ, անշուշտ մտքէն պիտի չանցըներ Հայերուն շատ խստիւ զգացնել զիրենց իրեն կապող կապը: Բայց, այդ հովիւներուն ու մշակներուն քով, առոյգ ու զօրեղ հիւթով Հայեր կան որոնք կանուխէն ձեռք բերած են գործի վարժութիւնը եւ Անդրկովկասի մէջ ամենուրեք գրաւած են այն տեղերը որոնք ռուս տիրոջը վերապահուած կը թուէին: Պօղոս Ա. ի բանակները կովկաս մտնելէ շատ առաջ, Հայերը արդէն սկսած էին տիրել Անդրկովկասի: Տասնեւեօթներորդ պարու Վրացիները Թիֆլիս կը քաշեն Հայերը որոնք համբաւուոր են իբր առեւտուրի մարդիկ: Վրացիները օգտակարին հոգը շատ ստորին կը նկատեն իրենց համար. հպարտութիւնը, ծուրութեան միացած, իրենց թող չի տար աշխատել. ամենքն ալ ազնուական են, իրենց ուրիշ բան չիցնար ընել բայց եթէ պատերազմիլ կամ իրենց զղեակներուն մէջ գինովալ: Հագուստ, ուտելիք, բարեկեցութիւն ունենալու համար, Հայերուն պէտք ունին: Անձայն անշուշտ, այդ վաճառականները կը տեղաւորուին. իրենց հարստութիւնը կ'աճի, իրենց թիւն ալ: Երաւէն, իր «Ուղեւորութիւն ի Պարսկաստան»ին մէջ որ 1688ին հրատարակուեցաւ, կը պատմէ թէ Թիֆլիսի մէջ ութ հայ եկեղեցի համարած է եւ միայն վեց վրացի եկեղեցի: Կուլտէնչիկա, 1772ին, կը գրէ թէ հայ տարրն է որ կը տիրապետէ Թիֆլիս: 1802 ի ուրազը, որ Վրաստանը ձարերուն կայսրութեան միացուց, աղիտաբեր հետեւանք չունեցաւ Հայերուն համար. մոսկով վաճառականները բնա հոգերնին չեն ընեք ճիւղեր հաստատել երկրի մը մէջ որ լեբան պատերազմներով տակնուվրայ է. իրենց խոհեմութիւնը ազատ ասպարէզ կը թողու Հայերուն վաճառականութեան: Հայերը մարդերուն գէմ կը կռուին, իրերուն գէմ կը կռուին կատաղութեամբ այն պանդուխտներուն որոնք պէտք է նոր հայրենիք մը ստեղծեն, նոր ճակատագիր մը շինեն իրենց համար, եւ երբոր՝ պարուս կիսուն՝ պատերազմները կը վերջանան, ա՛լ կրնան գիտազրուել ամէն մրցումի: Վրացիները, ճորտերուն ազատագրութեամբը հարկազրուելով հրաժարիլ իրենց աւատական բարքերէն, կիսովին սնանկացած, իրենց սեւցած, պազալգէ լեռնա-

կատարներուն վրայ տնկուած ամրոցներէն վար կ'իջնեն՝ միմիայն Բեդրպուրիի արքունիքին մէջ պաշտօն մը կամ սպայի արտօնազիր մը հայցելու համար: Իսկ Ռուսերը կը յամառին հաւատալու թէ Մոսկուա աւելի շատ դրամ կը վաստակուի քան Թիֆլիս: Ու այսպէս, Անդրկովկասի մէջ քաղաքակրթութեան յառաջիմութենէն, առեւտուրին ու ճարտարագործութեան ընդլայնումէն՝ Հայերը միայն կամ գրեթէ միայն կ'օգտուին: Հարստանալու ոչ մէկ առիթ կը փակցնեն: Պարուսի նաւթաբեր հողերը, Թիֆլիսի պանքաները, գրեթէ բոլոր շահաբեր ձեռնարկները, մեծ ու պզտիկ, իրենց ձեռքը կ'անցնին: Մէկէն ի մէկ խոչոր հարստութիւններ կը կազմուին: Այս գործի մարդերուն յանգստութիւնը իրենց բարգաւաճմանը հետ կ'աճի: Այսօր հայկական հոսանքը ամէն բան կու տուած է եւ ամբողջ Անդրկովկասի մէջ կը տարածուի:

Ռուսիա կը նախանձի այս աւելի բարեբաղդ կամ աւելի ճարպիկ մրցակիցներուն, որոնք ուրիշ բան չեն բայց եթէ օտարականներ զորոնք ինք առած պատուաբարած է: Եթէ իր սխութեամբը կը հալածէ իր հայ հպատակները, եթէ կը զղջայ անոնց՝ ազատութիւնը սահմանափակած չըլլալուն, եթէ մտքէն կ'անցընէ խորթ զակի պէս վարուիլ անոնց հետ, պատճառը ան է որ անոնց չի ներեր հարստացած ըլլալին: Հայերը կ'ատեն, ինչպէս կ'ատեն Հրեաները, որովհետեւ հարուստ են:

Հայերուն հարստութեան գէմ անո՛ր համար մանաւանդ աւելի կը զայրանան որ անոնք, հարստութեան հասնելու համար, ամենէն աւելի պարկեշտ միջոցները ընտրած չեն միշտ: Ամենքն ալ ուղղամիտ առեւտրականներ չեն, եւ իրենցմէ շատեր, շահուն սիրուն, զզուելի գործերու ձեռք գարկած են ու կը զարնեն գեռ: Ամէն ատեն, այդ «քրիստոնեայ Հրեաներուն» չարաշահութիւնը մատնանիշ եղած է, եւ հայ գրողները իրենք ալ, ազգին բարքերը վերանորոգելու նախանձախնդիր, յաճախ պարտաւած են վաշխառութիւնը: Այդ Հայերուն, որոնք քաղաքներու մէջ լուսնայափոխ ու միջնորդ են, գիւղերու մէջ գինեպան, իրաւաբ կը մեղադրեն թէ խոչոր տոկոսով փոխ կուտան ու անխիղճ են չլիճարող պարտապանին համար. թէ աննշան գումարով մը կը դնին ինչ որ թըշուռառութիւնը իրենց կը բերէ. թէ շահալիտութիւններ կ'ընեն, ապրանքները հրապարակէն կը ժողկեն՝ ժողովուրդը շահագործելու, ճգմելու համար, եւ թէ իրենց բոլոր տիքը կեանքը կը լափեն՝ գիշակեր անասուններու անյազութեամբ: Անոնք իսկ զորոնք կարելի չէ իբր վաշխառու մեղադրել, գործի մէջ յաճախ անանկ կերպ մը ունին որ զիրենք կասկածելի կ'ընէ Ռուսերուն ու վրացիներուն: Մանուածապատ կերպ մըն է աս. արձակ համարձակ գործ չեն տեսներ. երբոր իրենց հետ պայմանագրութիւն մը ընես, միշտ թակարդի մը վախը ունիս. պաշտուկ կ'առնեն կուտան, կը սողոսկին, կը սողան, եւ տակէն է որ, եթէ կրնամ այսպէս ըսել, կը տիրեն բոլոր մեծ ձեռնարկներուն:

Ռուսերուն զայրոյթը սաստկացնող բանը՝ Հայերուն իրենց հարստութիւնը գործածելու կերպն է: Բուպիւնները բռնալիր չեն նստեր ասպին անպին: Կը պահեն, ա՛ն է

իրենց հաճոյքը: Հաշուել զիտցող մարդիկ են ասոնք. շատերը խնայողութեամբ հարստացած են, ու հարստութիւնը իրենց խնայասէր սովորութիւնները փոխած չէ: Այդ մարդերուն շահամոլութիւնը պերճ ծախքերու ճաշակին հետ չի յարմարիր: Պարզ են, ցուցամոլութեան թըշնամի: Շատերը կը զգան իրենց ծնունդին, իրենց ընտանիքին, իրենց գաստիրարակութեան խոնարհութիւնը, եւ պերճանքի նրբութիւնները իրենց արգիլուած կը նկատեն: Ռուսերը, որոնք շոյլ են, ոճիր մը կը համարին որ Հայերը զոհացնելիք քմահաճոյքներ չունին:

Ռուսիա սրանեղութեամբ կը տեսնէ որ հարուստ հայ վաճառականները իրենց զբամը անշարժ կալուածի ու հողի կը պառկեցնեն: Անզրկովկասի մեծ քաղաքներուն մէջ, տուններուն մեծ մասը անոնցն է: Ճորտութեան բարձուձէն ի վեր, հողային սեփականութիւնը, որ մինչեւ ան ատեն վրացի ազնուականութեան վերապահուած էր, Հայերուն մատչելի է. կը սկսին քաղաքներէն դուրս ելլել, ուր փակուած էին, եւ դաշտերուն մէջ տարածուել: Ասկից՝ ուժի եւ ազգեցութեան պատճառ մը սրուն հետեւանքներէն Ռուսիա իրաւամբ կը վախնայ: Չմնցա՛ւ: Հայերը չեն ուզեր բանտարկուած մնալ գործի մէջ: Ըմբռնած են որ ընկերային համարում եւ հեղինակութիւն ան ատեն միայն կ'ունենան երբ մտաւորական մշակութեան սեմէն անցնին: Եւ իրենց զբամը ծախսած են կրթութեամբ համար: Ու ահա վաճառականներուն ընդ կը բարձրանայ աւելի բաց մտքով, բազմապիսի ընդունակութիւններով դասակարգ սը: Հայերը ձեռք կը զարնեն գիտութեան, գպրութեանց, օրէնքներուն: Վաճառականի զաւակները համալսարան կ'երթան, ու անկից ետ կը դառնան ճարտարագէտ կամ ուսուցիչ, իրաւագէտ կամ բժիշկ. շատը պետական ծառայութեան մէջ կը մտնեն: Վաճառականութեան մենաշնորհին տիրել յետոյ, Հայերը Ռուսերուն կը մրցակցին ազատական պաշտօններուն համար:

Հարստութիւնը ուժ մըն է: Հայերուն համար մտաւորական ազատագրութեան ազգակ մը չէ ան միայն, հապա նաեւ բրորականտի միջոց մը: Համերաշխութեան ուղին կը ծաղկի իրենց մէջ. փոխադարձ աջակցութիւն կը նուիրեն իրարու: Հարուստ հայ վաճառականները հազարաւոր բուլլիներ կը նուիրեն էջմիածնի վանքին: Դպրոցներ հիմնելու համար առատաձեռնութեան մրցում մը ունին. վաճառականներ, ինչպէս Պ. Մանթաշեան, մինչեւ յիսուն ուսանող կը պահեն գիմնադիւններու կամ համալսարաններու մէջ: Կ'օգնեն հայ լրագիրներուն: Կը վարձատրեն հայերէնի ուսուցիչները, Հայաստանի պատմագիրները: Նախանձախնդիր են իրենց զբամով օժանդակելու ամէն բանի որ ազգային գաղափարին հետ առնչութիւն ունի:

Նմանապէս հարստութիւնն է որ Հայերուն բաժին մը կ'ապահովէ հանրային գործերու մէջ: Յայտնի է թէ ուսական օրէնքը իւրաքանչիւր քաղքի պլուրը կը քնէ քաղաքային խորհուրդ մը կամ տ ու մ ա մը, որուն անդամները կ'ընտրուին քաղքին կալուածական տուրքի տուձարին մէջ արձանագրուած բնակիչներուն ընդմէջ: Ըստ որում Հայերը, Անզրկովկասի շատ քաղաքներու մէջ, բնակչու-

թեան էն բազմաթիւ ու էն հարուստ մասը կը կազմեն, մեծամասնութիւն ունին ընտրական շատ շրջանակներու ե՛ հետեւաբար՝ քաղաքային խորհուրդներու մէջ: Առէք թիֆլիսը. Հայերը, զրեթէ ամբողջ կայուածներուն տէրը ըլլալով, ընտրութեանց տէրն են. 1895ին, տուձարին մէջ 67 աթոռ ունէին եւ 13 աթոռ միայն թողած էին Ռուսերուն, Վրացիներուն եւ Թաթարներուն. եւ քաղաքապետը, զոր խորհուրդը կ'ընտրէ, Հայ մըն էր, իշխան Արղութինսքի-Տոլիորուքոֆ: Ահա ուրեմն քաղաք մը ուր վերջապէս 162,000 բնակչի վրայ Հայերը 65,000 հոգի են միայն, եւ ուր սակայն իրենց վաճառականութեան, իրենց կալուածական հարստութեան շնորհիւ, ուզածնուն պէս կը վարեն քաղաքային գործերը: Մինչպէս տուձարի խորհրդականները, ուսական շատ քաղաքներու մէջ, շատ քիչ բերում ցոյց կուտան իրենց պաշտօնին համար եւ անփութութեան օրինակը կը պարզեն, Հայերը, թիֆլիսի մէջ, եռանդով կը կատարեն իրենց պաշտօնը, միշտ իրենց հասարակութեան շահերուն մտածելով: Ռուսերուն գրգռութիւնը հասկնալի է:

Պէ՛տք է զարմանալ եթէ Հայերը, հարստացած, լուսաւորուած, յանդգնած, կը տառապին ծանայելէ, ազատութեան կը աննշան: Հարստութիւնը հպարտ սովորութիւններ տուած է իրենց. աւելի աշխոյժ ու աւելի կրակ ունին: Ուժը եկած է իրենց. ուժին հետ արկամք: Երբ աղքատ էին, իրենց տէրերուն առջեւ կը կըկէին. հիմակ որ հարուստ են, կը մտաբերեն զիմադրել: Իրենց մէջ շատեր կան որ չեն զոհանար իրենց ճակատագրով: յաւակնութիւններ կը յայտնեն. իրենց իրաւունքին սերտի փորած են. կ'ուզեն պահպանել զայն, ընդգէմ ամէն ոտնձգութիւններու, ամէն զոհողութիւններով:

ԲԻԷՐ ՄՈՌԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

Կ. ՊՈԼՍՈՅ

ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բ.

1887—1889

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՄԱԳՍՈՒՏ ՍԻՄՈՆ ՊԷՅԻ

Նուրեան էֆէնտի 1885ին յաջորդած էր Մագնուս Սիմոն պէյի իբր վարչապետ Կ. Պոլսոյ պատրիարքարանին. Սիմոն պէյ 1887ին յաջորդեց Նուրեան էֆէնտիի:

Սիմոն պէյ ատենապետի պաշտօնը ստանձնեց սահմանափակաւ աւանդութիւններու ոգին բռնաբարոզ ընտրութեամբ մը: Դրան հետ հաշտարար քաղաքականութեան միտումը տկարացած էր վերջին երկու տարուան մէջ, Նուրեան էֆէնտիին փառատենչ շահախնդրութիւնը ընդլայնած ըլլալով հայ ժողովուրդն ու թիւրք կառավարու-

Թիւնը իրարմէ անջրպետող փոսը: Նուրեան վարչութեան լրանալուն Կ. Պոլսոյ Ազգային ժողովը տրամադիր չերեցաւ 1885 ի սխալին կրկնութեան. սակայն մեծամասնութիւնը բուհաստիկն զիմեց առանց կանխաւ համաձայնութեան ֆաղաքական ժողովի անդամակցութեան ընտրելիներու ցանկի մը վրայ, ուստի եւ ձայները ցրուեցան: Ընտրութիւններու ամբողջացումը մնաց համեմատական բուհաստիկութեան, ուր առաւելագոյն թիւը կը բաւէ օրինաւորապէս պաշտօնի կոչուած ըլլալու համար: Համեմատականին մէջ Սիմոն պէյ տասներջորս ձայնով վերջին ընտրուողը եղաւ. արժանապատուութեան զգացումը իրեն պիտի չի ներեր այսքան տկար փոքրամասնութեամբ, ակներե նշան անվստահութեան, բազմիւ ժողովականի աթոռը: Սակայն Սիմոն պէյ կը հաւատար, ու փորձն ալ ամրապնդած էր այդ հաւատքը, թէ Պատրիարքարանին վարչապետութիւնը իր անձնական գործերուն յաջողութեանը հզօրապէս ձեռնաու է, ուստի եւ այս անգամ ալ խորհեցաւ. «Գործերու յաջողութիւնը արեանապատուութեան զոհողութիւնը կ'արժէ:»

Համեմատական բուհաստիկութիւն մը եթէ կրնար Սիմոն պէյը պատրիարքարանին դնէն ներս սպրկեցնել, սահմանադրական անհրաժեշտութիւնները սակայն, որոնք համադրային են, վարչապետի պաշտօնը կը վերապահեն մեծամասնութեան մատնանիշ ըրած անձնաւորութեան, հետեւաբար եւ չնչին փոքրամասնութեամբ ժողովական նշանակուած անձը կարող չէր ատենապետելու իրաւունքը վայելել: Բայց երբ Մաքսուտ մը, Նուրեան մը կ'անդամակցին կեդրոնական վարչութեան, ոչ ոք կրնայ համարձակիլ ատենապետի աթոռը անոնց ճիրաններէն խլել:

Անկախ զբամաւէր բայց միանգամայն մինչեւ աստիճան մըն ալ պետական անձնաւորութիւն՝ իբր Պոլսոյ կառավարական շրջանակներու հետ ընդարձակ յարաբերութիւն մշակող, Մաքսուտ Սիմոն պէյ թէ՛ Ազգին եւ թէ՛ Դրան փոխադարձ վստահութիւն ներշնչելով հաշտարար քաղաքականութեան մը միջնորդը հանդիսանալու զիրքին մէջ կը գտնուէր: Անշահախնդիր ազգասիրութեան սակայն տրուած է կարողանալ, մտաւոր ուժի աշակցութեամբ, պարագաներու ստեղծած նպաստաւոր զիրքէն օգտուել, եւ բարոյապէս մեծնալ ու բարձրանալ ազգին մատուցուած ծառայութիւններու պատուանդանին վրայ: Այլ մեծութիւնը որուն կը նկատէր Սիմոն պէյ՝ փաշայութեան տիտղոսն էր, ու բարձրութիւնը որուն վրայ աչքերը կը մնային յառած՝ ոսկիներու դէզն էր: Հոն ժամանելու համար արծիւի սլացքին պէտք չի կար. սողոսկումը կը բաւէր:

Ու սողոսկող մը եղաւ ասիական խորամանկութեամբ պղտիկցած այդ մտքին տէրը, զուրկ զարչացումէ, առանց ո՛ր եւ է տաղանդի: Թրքական միջավայրերու հոգիին թափանցած, նորընտիր վարչապետը աղմուկի թշնամին էր. իր քաղաքականութիւնը եղած էր միշտ, ու շարունակեց ըլլալ, լուրթեան մէջ խղիւղ ազգին ցաւերը: Կտոր կտոր կը ջնջէր, հատիկ հատիկ կ'անհետացնէր իրաւունք եւ առանձնաշնորհում: Խնամակալն էր որ իր հոգածու պաշտ-

պանութեանը՝ յանձնուած՝ որբերու ժառանգութիւնը կը մխիւտ բռնի բռնի, ամէն օր բան մը ծախելով:

Սիմոն պէյ հայ ազգին եւ թիւրք կառավարութեան փոխադարձ յարաբերութիւնները շատ լարուած դասու երբ ֆաղաքական ժողովին ատենապետութիւնը ստանձնեց: Դուռը աւելի զրականօրէն կազմակերպած էր Հայաստանի հարստահարութիւնները, ու ա՛լ ամէն յոյսէ զրկուած՝ հայ ժողովրդին աչքերուն Յեղափոխութեան գաղափարը կը ներկայանար փրկութեան իբր միակ զրօշակակիրը: Ար մէն ի ան երկու տարիէ ի վեր Մարսէլ, հիմնուած, կը յուզէր արտասահմանի հայութեան սիրտը, կը խոսովէր անոր միտքը օրը օրին պատկերացնելով Հայաստանի սխուր լիճակը: Եւրոպա ու Ամերիկա բնակող Հայերը հակաթրքական ցասկոտ քաղաքականութեան կը հետեւէին, ու խուլ զայրոյթի սարսուռը կ'ընթանար Հայաստան եւ Պոլիս:

Այս կացութիւնը չէր կրնար վրիպիլ Դրան ուշադրութեանէն. վստահայի ապագայի մը երկիւղը ծնունդ առաւ կառավարական շրջանակներու մտքին մէջ: Ելլալով պաշտը եւ Դուռը ուղեցին, առանց թրքական քաղաքականութիւնը Հայոց նպաստաւոր ամենաթեթեւ փոփոխութեան մը ենթարկելու, այդ վստահին առջեւ անեւ զոնէ առժամապէս, խաբերայական միջոցներու շնորհիւ ազգային զրգուովը հանդարտեցնելով: Ելլալով նախաձեռնութեամբ, «ականաւոր» բանի մը հայեր որոնց մէջ նաեւ Տասեան Արթին փաշա, Բերա գումարուեցան ու որոշեցին եւրոպայեան հայերուն պատուիրակ մը խրկել հակաթրքական յուզումը դադարեցնել տալու նպատակաւ: Լուր քաղաքականութեան մարզը, Սիմոն պէյ, այս որոշումին հակառակ կարծիք յայտնեց՝ այդ օրինակ զիմուծէ մը հակաթրքական աւելի ազդակալից ցայցերու հաւանականութիւնը գուշակելով: Բերայի գումարումը Պատրիարքարանի իրաւասութեան շրջանակէն դուրս դանդաղուն Սիմոն պէյին ձայնը չէր կրնար վճռական ազդեցութիւն ունենալ: Վարչապետը իր զիտողութիւնները կրկնեց նաեւ Սասրուզամ Քեամիլ փաշային, բայց ոչ ոք կրնար համարձակիլ անհետեւանք թողուլ Ելլալով բոլոր ներշնչումները, հետեւաբար եկեղեցականի մը, Դուրեան Եղիշէ վարդապետին, պաշտօն տրուեցաւ Եւրոպա այցելել ու Հայոց միտքը Դրան փափաքներուն համապատասխանող ուղղութեան մէջ դնել: Սիմոն պէյին նախատեսութիւնները իրականացան. բորբոքումը աւելի եւս սաստկացաւ, եւ ցասումի ընդհանուր աղաղակը ուժգին հնչեց: Պատուիրակութեան այս ձախորդ արդիւնքը Սիմոն պէյին վարկը Քեամիլ փաշայի աչքին բարձրացնելու մեծապէս նպաստեց:

Այս բարձրացումն էր որ օր մը Սիմոն պէյին համարձակութիւն տուաւ անսպասելի յանդգնութեան մը զիմել Յարութիւն Պատրիարքին հետ մէկտեղ. Պատրիարք ու վարչապետ ներկայանալով Քեամիլ փաշային բողոքեցին Հայաստանի հարստահարութիւններուն համար, սատրազամին առջեւ թափելով հայ աշխարհին ամէն կողմէն Պատրիարքարան խրկուած սարոռագրեցիկ տեղեկագիրնէրը: Որպէս զի այս բողոքարկութեան ազդեցութիւնը բնական է, Դուռը զիմեց Ազգեան Պատրիարքին միջամտութեանը, Հայաստանի կացութիւնը Գում-բաբուի Պատրիարքարանին նկարագրածէն Եւրոպայի տարբեր ցայց տալու:

Համակերպութեան «խմաստուն» քարոզիչները ինչպէս չեն յիշեր թէ երբ Յարութիւն պատրիարքի նման պահպանողականը եւ Սիմոն պէյի պէս թրքասէրը պահ մը կը հարկադրուին մտնալ, առաջինը՝ Երուսաղէմի շահերը, երկրորդը՝ փաշայութեան երօզը, ու հանրային զգացումէն մղուած, բողոքի ձայն կը հասցնեն մինչեւ Երջարզի պալատը եւ անկէ Եւրոպա, ո՞րն էր ուրեմն այն զօրութիւնը որ պիտի կրնար մարել զփայտն, եռանդատ երիտասարդութեան մը բորբոքումը:

Եւրոպայի պատահարներու նախաշրջան այդ ժամանակամիջոցին հայ ազգը զիկալարելու շատ ապիկար պետ մըն էր Սիմոն պէյ: Իր պաշտօնավարութեան ատեն կատարուած պատրիարքական ընտրութիւնը ցոյց տուաւ որ վարչապետը եթէ կը ճանչնար թրքական շրջանակները՝ սակայն ազէտ մըն էր հայ ժողովրդին հոգեբանական ու սուլմասիրութեանը մէջ. ո՛չ ազգին ձգտումը ծանօթ էր իրեն ո՛չ ալ նոր սերունդն ու անոր ուժը: Սիմոն պէյին եւ թրքասէրներուն պատրիարքացուն էր Պրոտոպի առաջնորդ Բարթօղիմէոս եպիսկոպոսը, Երջարզի պալատէն եւ օսմանեան նախարարներէն պաշտպանուած ու յանձնարարուած. իր կուսակցութեան իղձերը յաջողցնելու պարտականութիւնը ստանձնեց Սիմոն պէյ: Մեր արդի հանրային կեանքին կարելոր մէկ էջը կը յօրինէ 1888ի պատրիարքական ընտրութիւնը որ պահպանողական ու ազատական ուժերու կանոնաւոր կազմակերպութեան եւ ընդլիմահարութեան ամփոփումն է, — կազմակերպութիւն եւ ընդլիմահարութիւն բարիքներով ու չարիքներով այնքան բեղմնաւոր 1888էն յետոյ: Ուրիշ առթի կը վերապահեմ այդ պատմութիւնը իր ամբողջութեանը մէջ ընել:

Երբ բացուեցաւ պատրիարքական ընտրութեան թուականը, Տքթ. Թիրեաքեան կ'առաջնորդէր ազատական կուսակցութեան եւ Մազսուտ Սիմոն պէյ պահպանողականներուն: Ազատականները, սակաւաթիւ խմբակ Նուրեանի պաշտօնավարութեանը, հիմա յսգնախումբ կը ներկայանային երեսփոխանութեան մէջ, ու իրենց պետը, բժիշկ Պ. Թիրեաքեանը, բարձրացուցեր էին ատենապետութեան աթոռը: Չգտելով որոշ ուղղութեան, աշխատելով կարգապահութեամբ, կարողացան հետզհետէ կատարուած ընտրութիւններէն գրաւել բազմաթիւ աթոռներ:

Բարթօղիմէոս եպիսկոպոսին պատրիարքութիւնը յաջողցնելու համար Սիմոն պէյ կռիւնեցաւ Կ. Պոլսոյ թիւրք մամուլինքեւ ֆրանսերէն լեզուով աշխարհաքաղաքացի թերթերուն, օգնական ունենալով Դրան ծառայութեան մէջ գտնուող էֆէնտիներէն մէկ քանին, առանց կարելորութիւն ընծայելու նոր հասած երիտասարդ երեսփոխանութեան որուն գոյութիւնը իսկ գրեթէ կ'անգիտանար:

— Աս խլէզները ո՞վ են որ ինձի հետ պիտի պիտի կլին, կ'ըսէր:

Ընտրութեան օրը սակայն ատ «խլէզներուն» ո՞վ ըլլալը հասկցաւ: Իր բոլոր ուժերը ժողովելով Սիմոն պէյ հազիւ կրցաւ 39 ձայն համախմբել թրքանուէր ընտրելիին շուրջը, մինչ իր դէմը կ'եղէր 60 ձայնի ընդլիմահարութիւն մը: Եթէ գեպերը խորէն Նար—Պէյի վերջնական յաղթանակը կիսատ թողուցին, բայց Սիմոն պէյ պարտուած

կը մնար իր Բարթօղիմէոս եպիսկոպոսովը: Յաւանուած տղիւթութեան արժանաւոր պատիժ:

Իր ժամանակին ձգտումներուն Սիմոն պէյին այդ արդիւթեանը պարտական ենք Եկեղեցական Համագումար ժողովը նստի հրաւիրելու որոշումն ալ: Վարչապետը չմտաբերեց այդ գումարումին ծնելիք հետեանքները: Աշրգեան Խորէն պատրիարքին պաշտօնավարութեան առաջին ամիսները ինչ ինչ շրջանակներու մէջ խորհուրդ յղացուեցաւ Հայաստանի բարեկարգութիւններու խնդիրը նախ Պատրիարքարանին միջոցաւ պաշտօնապէս վերահանդանացնել. ծանր ձեռնարկ սրուն յաջողութիւնը ազգը կրնար կիեղեցականներէն սպասել: Այս դաշտնի նպատակը եթէ հրապարակուէր ժողովին գումարումը անհնարին կը դառնար, ուստի եւ պատրուակի մը գիտար պարտաւրիչ էր, եւ ահա ամուսնական գործողութիւնները օրուան տագնապալից խնդիրները եղան, հանրային միաբեր յուզուելով՝ կիեղեցականներու որոշումին պէտքը զգացուեցաւ, Պատրիարք եւ Սիմոն պէյ հաւանեցան Համագումար ժողովը նստի հրաւիրելու. որոշումը արուեցաւ եւ արձանագրուեցաւ Պատրիարքարանին ատենագրութիւններուն մէջ, սակայն գործողութիւնը մնաց յաջորդ վարչութեան, Սիմոն պէյին պաշտօնավարութեան սահմանադրական երկամեայ շրջանը լրացած ըլլալով:

Մագսուտ Սիմոն պէյ ինքն ալ քաշուեցաւ առանց Նուրեան էֆէնտիին աւելի բազաւարութեան: Զօրացած երեսփոխանական մարմին մը կը յանձնուէր Սահմանագրութիւնը. այս երկու տարուան մէջ յիշափոխական գազափարը աւելի արմատացած էր Հայոց մտքերուն մէջ, ու կազմակերպութիւնները կը ստեղծուէին եւ կը կանոնաւորուէին: Եւրոպացի Հայերը աւելի քան երբեք անհանգարտ, հակաթրքական հայերէն թերթերուն թիւր աւելցած, եւ Հայկական խնդիրը ծանրապէս յուզուելու վիճակին հասնելու վրայ, ահա ինչ եղաւ պահպանողական կուսակցութեան եւ իր պետին թրքասէր քաղաքականութեան արդիւնքը: Չենք գիտեր թէ Մագսուտ Սիմոն պէյ իր սեղանաւորական գործերուն մէջ ո՞րքան բարեյաջողութիւն գտաւ, բայց չլրցաւ հասնիլ իր մեծ փափակին, «փաշայ» տիտղոսին: Մեկնեցաւ Պատրիարքարանէն գաւնութիւնը սրտին մէջ, «ցտեսութիւն» ըսելով:

Գ.

1889—1891

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Պ. ՍԱՀԱԿ ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ

Դրան հետ համաձայնութեամբ Հայաստանի վիճակը բարուրեցելու ազգային հակամիտութիւնը գրեթէ ջնջուած էր չորս տարուան փորձառութեամբ: Հայ ժողովուրդը սեսաւ թէ ուղղակի պետական ծառայութեան մէջ գտնուող մը որպիսին էր Նուրեան էֆ., կամ կէս—անկախ անձնաւորութիւն մը՝ նման Սիմոն պէյի, հաւասարապէս անձրկած էին հաշտարար քաղաքականութիւն մը հիմնելու: Բացառիկ եւ նորօրինակ գեպերու թուականի մը ժամանակումին նախազգացումը կը տիրէր: Ազատական երեսփո

խաններէն ոմանք խորհեցան թիւրքիոյ Հայոց կեդրոնա-
կան վարչութիւնը յանձնել Դրան ազդեցութիւնը չկրող
անշահահինգիր եւ խելացի անձերու. առանց պաշտօնա-
կան էֆէնտի մասնակցութեան Քաղաքական ժողովի մը
գաղափարը յղացուեցաւ:

Ազատականները չուզելով դիպուածին թողուլ նոր
Քաղաքական ժողովի ընտրութիւնը, որոշեցին նախապէս
համաձայնիլ ընտրելներու միօրինակ ցանկի մը վրայ:
Սակայն Դրան պաշտօնեաները նորընտիր մարմին բոլո-
րովին տարամերժելու առաջարկը համաձայնութեան գը-
խաւոր արգելքը կը ներկայանար: Անյիշատակ ժամանակ-
ներէ ի վեր հայ ժողովուրդը առաջնորդուած ըլլալով
թիւրքիոյ պետական անձնատրութիւններու հետ սերտ
յարաբերութիւն մշակողներէ, շատերը անխոհեմ ու յան-
դուգն քաղաքականութիւն մը համարեցին այդ խնամա-
կալութեան լուծին յանկարծական թօթափումը, մանա-
ւանդ որ բոլորովին մոռցուած չէր Խրիմեանի պատրիար-
քութեան օրով գրեթէ նմանօրինակ փորձի մը անյաշող
հետեւանքը: Ազատական ընտրելիները տրամապիւր չերե-
ցան իրենց անունը արձանագրուած տեսնել «Կարմիր
ցուցակ»ին մէջ, ինչպէս կոչուեցաւ էֆէնտի չպարունա-
կող ընտրելիներու ցանկը: Ու խոհականութիւնն ալ կը
պարտաւորէր զգուշաւոր ուղղութեան հետեւիլ եւ մէկէն
ի մէկ Դրան կասկածները չարթնցնել հայ ազգին տրա-
մադրութիւններուն վրայ եւ Պատրիարքարանը կատարե-
լապէս անվստահելի ցոյց տալ: Այս մտածութիւններէն
առաջնորդուած, ազատական կուսակցութեան զանազան
խումբերը փոխադարձ զիջողութիւններով համաձայնեցան
նորընտիր Քաղաքական ժողովին մէջ երկու էֆէնտի զե-
տեղել, պայմանաւ որ նշանակուած անձերը չառնուին
գործոն զեր մը կատարելու շատ տրամապիւրներէ. այդ ա-
նունները միայն իբր շանթարդել կրնային ծառայել: Ունձեան
Աբիկ եւ Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտիները այս դի-
տաւորութեան իրականացումին յարմարագոյն անձնաու-
րութիւնները նկատուեցան, առանց իրենց գիտակցու-
թեանը: Առաջինը՝ վաճառական մը, օսմանեան նախա-
րարներուն հետ թէեւ շատ դործ ունեցող բայց առանց
վատ համբաւի. երկրորդը՝ Դրան իրաւագետ խորհրդական,
բայց առանց ազդին ատելի ըլլալու: Թէ՛ մէկը եւ թէ՛
միւրը նոր ընտրուելիք վարչութեան գործնականապէս
մասնակցելու վիճակին մէջ չէին գտնուեր, Ունձեան էֆէն-
տի գործընդուն եւ Նորատունկեան էֆէնտի առողջութեանը
պատճառաւ: Այսպէս ահա այս երկու «էֆէնտիներուն»
ընտրութեամբը թէ՛ երեւոյժը կը փրկուէր թէ՛ սկզբունքը:

Ընտրութեան օրը ազատականները միօրինակ ցու-
ցակով մը եւ պահպանողականները Նուրեան էֆէնտիի եւ
Արալանեան Ստեփան փաշայի միջեւ բաժնուած, քուէար-
կութիւնը կատարեցին. յաղթանակը մնաց ազատական-
ներուն:

Ազգային ժողովին ատենապետութեան կոչուեցաւ
Տրք. Թիւրքեան. եւ այսպէս հայ ժողովուրդը ապահով
եղաւ թէ իր շահերու պաշտպանութիւնը, Սահմանադրու-
թեան անխախտ պահպանումը երաշխաւորեալ կը մնային:

* * *

Նորընտիր Քաղաքական ժողովին 14 անդամներէն 9ը
կը բնակէին Կ. Պոլսոյ Գատը-գեղ թաղը, պարապ մը
որ այդ արուարձանին հայերուն մեր հանրային կեանքին
վրայ ունեցած ազդեցութիւնը երեւան կը բերէ:

Ռուսութիւրք պատերազմէն ետքն էր որ Գատը-գեղ-
ցիները յայտնուեցան. կրթական ընկերութիւններու
Գատը գեղէն տրուած աջակցութիւնը եւ Հայաստանի
սովին համար հոն կազմուած Կեդրոնական Յանձնաժո-
ղովը հուշակեցին Կիւլպէնկեան, Ղազարոսեան, Մանուկ-
եան, Յովակիմեան, Նորատունկեան, Շաշեան, Ունձեան
եւ ուրիշ անուններ:

Հարաւի արեւուլը սղողուած, Մարմարայի երկայնքը
տարածուող այդ գաշտահարթը, դեռ քառասուն տարի ա-
ռաջ գրեթէ ամայի, հիմա սիրական բնակավայրն էր զա-
նազան գաւառներէ ու թաղերէ համախմբեալ գաղութի մը:
Հոն ո՛չ թաղային պատմութիւն, ո՛չ տեղական հին վէճե-
րու ժառանգութիւն, ո՛չ մըլոտած աւանդութիւններ կը
չլատէին եկտրին կորովը: Գատը գեղ բնակելու համար
գտնէ բարեկեցիկ վիճակ մը ունենալ պարտաւորիչ էր:
Քաջառողջ, գործի մարդ կեստարացիները մանաւանդ յար-
գեցին Սթամպուլէն անշատուած այդ օդատուն տափարակը,
որ անցով կրնային վայելել ընտանեկան կեանք, եւ ի-
րենց զաւակները գերմ պահել Բերայի ամէնօրեայ առ-
ձեռն փորձութիւններէն:

Թաղին վարժարանէն, Պէրպէրեանէն, Բուպէրթ Քու-
լճէն շիշանաւարս նոր սերունդ մը ծաղիկեցաւ բարգա-
ւաճումի նպաստաւոր այդ հողին վրայ: Նիւթական մա-
շեցնող հոգերէ գրեթէ ազատ, այդ նորահաս երիտասարդ-
ները եռանդալից մասն հանրային կեանքի մէջ: Գատը
գեղի հայերը, հին սերունդ թէ՛ նոր, միաբանութեամբ
իբր հոծ մարմին կարեւոր դեր մը սկսան կատարել մեր
հանրային կեանքին մէջ. միայն թէ իրենց կը պակսէր նա-
խաձեռնութեան համարձակութիւնը: Բայց երբ ձեռնարկ
մը կը յառաջդիմէր կանոնաւոր յարատեւութեան գրաւ-
կան ընծայելով, Գատը գեղցիներուն աջակցութիւնը ա-
պահովեալ էր: Զգուշաւոր եւ խոհեմ վաճառականին բը-
նագրն է որ միշտ երեւան կուգայ: Ողջ գործ առեւտուրի
մէջ, ողջ գործ հանրային կեանքի մէջ:

Նորընտիր Քաղաքական ժողովը վաւերացնող կա-
ռավարական պաշտօնագիրը շատ ուշացաւ, գրեթէ երեք
ամիս, ինչ որ բնաւ չէր պատահած մեր Սահմանադրա-
կան տարեգրութեան մէջ. այս յապաղումը ակներեւ ա-
պացոյց մըն էր այն մեծ կարեւորութեան զոր Դուրը կ'ըն-
ծայէր Հայոց Պատրիարքարանին վարչական մարմիննե-
րուն:

Նորատունկեան Գաբրիէլ էֆէնտի հրաժարական խըր-
կեց իսկ Աբիկ էֆէնտի Ունձեան մեկուսացաւ. ուրեմն
Քաղաքական ժողովը կը մնար առանց էֆէնտի: Դժբաղ-
դաբար ուրիշ երկու անգամ ալ պակսեցան. Ներսէս Ներ-
սէսեան որ Ղալաթիոյ հրապարակին վրայ կարեւոր դիրք
գրաւած էր, մեռաւ առանց պաշտօնը ստանձնելու. շատ
ոյս կար թէ երիտասարդ սեղանաւորը խոտապահանջ
ժողովականի պարտականութիւնը պիտի կատարէր: Իսկ
Պ. Յովհաննէս Պոյաճեան գործով հեռացաւ Պոլսէն.

զգալի կորուստ: Այդ ուղղամիտ անձը լաւ կը ճանչնար նահանգները. տասնհինգ տարի առաջ Սարը-Համգայի համբաւաւոր խնդրին քննիչ կարգուած էր եւ բարեխղճութեամբ պաշտօնը կատարած. ետքէն ալ Ապէտին փաշայի քննութեան շրջանակին մէջ Պատրիարքարանի ներկայացուցիչ եղաւ:

Քաղաքական ժողովը մնաց ուրեմն տասը անգամով, որոնց ութը Գատը գեղցի: Ատենապետութեան կոչուեցաւ Պ. Սահակ Ղազարոսեան, վաճառական մը որ Սովետոյ ինամատար կեդրոնական Յանձնաժողովին անդամակցած էր. լաւ խօսող, իր փորձառութեամբը, տարիքովը ու զիրքովը յարմարագոյնն էր նոր վարչութեան ատենապետելու:

Այս քաղաքական ժողովը մասուլէն մկրտուեցաւ «մտատիպար» մակդիրովը:

* * *

Մտատիպար քաղաքական ժողովին կը նախագահէր Աշրգեան խորէն պատրիարք որ հաւանօրէն հայ ազգին սիրելի եկեղեցականը պիտի հանդիսանար եթէ Ազգային ժողովը շարունակէր ընթանալ 1889ի ուղղութեամբ:

Այն սուլթան Համիտը որ 1894ին այնքան զժկամակեցաւ Աշրգեան պատրիարքին հրստարականը ընդունելու, 1889 ին նոյն Աշրգեանին համար ըսած էր, ազգին գործերուն առթիւ պալատական պաշտօնէութեան հետ անոր վարմունքին նեղացած.

— Աս լերան ա՛րջն ալ ոսկից գոտան դէմս հանեցին: Երգումին օրը նորընտիր պատրիարքին ատենաքանութիւնը յուսատու խոստումներով լեցուն էր.

— Աս թագաւորը իմաստուն թագաւոր մըն է, ըսաւ ազգարարութեան կորովի շեշտով, ուստի եւ գիտէ թէ պէտք է հայ ժողովուրդը գոհացնէ որպէս զի սիրաշահի անիկա:

Չեմ յիշեր թէ «շրջահայեաց խոհականութիւնը» ինչպէս արձանագրել տուաւ պատրիարքական յայտարարութիւնը Ազգային ժողովին ապագրեալ ատենագրութեան մէջ, բայց անկարելի է մոռնալ գոհունակութեան զգացումը որ հրճուեցուց ազատականները.

— Չէ՛, ասանկ յայտարարութիւն մը պիտի չընէր Սիմոն պէյին Բարթոլոմէոս եպիսկոպոսը, ըսին:

Եւ սրիշներ, Ներսէս Պատրիարքին բարեկամ համարուողները, կը յայտարարէին.

— Ներսէս պատրիարք սկիզբները թրքամուլ մըն էր, կամաց կամաց կարգի եկաւ. Աշրգեան մէկէն ի մէկ առաջ կը նետուի:

Այդ 1889ի «մտատիպար» քաղաքական ժողովին զլիաւոր վարիչները կ'ըսէին.

— Հաւասցէք որ Աշրգեանին համբաւը պիտի գերազանցէ Ներսէսինը. չէք զիտեր ինչ սքանչելի մարդ է:

Այսքան գեղեցիկ յոյսերու սկզբնաւորութեամբ պաշտօնավարութեան մը ինչո՞ւ ա՛յնքան տխուր վերջաւորութիւն:

Յոռեփոխութիւնը միայն պատրիարքին անբարեխիղճ աննշանքներուն չվերագրենք: Վատերը միշտ բաւութեան նոխազը կը փնտռեն: Պատմութեան ուսումնասիրութիւնը եթէ մեր փորձառու առաջնորդը ըլլալ կոչուած է, մեծ սխալ կը գործենք եւ մշտնջենական տգիտութեան կը դատապարտուինք երբ սահմանազրական գրութեամբ կառավարուող ժողովրդի մը հանրային կեանքին ամբողջ պատասխանատուութիւնը անհատներու վրայ բեռնաւորենք, սխալներու բացատրութիւնը բառախաղեր ինչրենք. Աշրգեան մականունը «Էշէքեան»ի վերածելով չէ որ կարելի պիտի ըլլայ լուսաբանել հինգ տարուան շրջանը, ա՛յնքան բազմաբեղուն, թիրքեան եւ թիրքեոյ հայերուն կացութիւնը յեղաշրջող այդ 1889-1894 թրւականը:

ԱՐՓԻՍՐ ԱՐՓԻՍՐԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Խ Ն Դ Ի Ր Ը
ԱՆԳՒԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ՉԵՌԻԸ

«Բիւլիու օլ Բիւլիուզ» անգլիական հանդէսին հանրածանօթ անօրէնը, Պ. Սթէտ, իր թերթին յունուար 15ի թիւին սկիզբը ընդարձակ յօդուած մը ունի՝ «Նոր քաղաքականութիւնը՝ նոր ժամանակուան համար» խոստման լից վերնագրով:

Յօդուածը քննադատութիւն մըն է Անգլիոյ արգի աշխարհավարութեան, քաղաքական, առեւտրական եւ ընկերային երբեակ անսակէտով, յատկապէս շեշտելով Անգլիոյ գործունէութեան այս երբեակ ասպարէզներուն մէջ ալ հիմնաւոր փոփոխութեան մը՝ անհրաժեշտ հարկը: Բոլոր խորհող մտքերու մէջ, կ'ըսէ, յամբաբար համոզում կը կը գոյանայ թէ եթէ Անգլիա կ'ուզէ պահել իր զերքը աշխարհի մէջ, պէտք է շուտով ու վճռականօրէն իր քաղաքականութիւնը յարմարցնէ նոր ժամանակին փոփոխուած պայմաններուն:

Չանց ընելով Անգլիոյ ներքին քաղաքականութեան մասին Պ. Սթէտի տեսութիւնները, հետեւինք անոր հետ Բրիտանական արտաքին քաղաքականութեան ոլորտներուն: Ո՞րն է այդ արտաքին քաղաքականութեան էն բացայայտ դէպքը: Բրիտանական կառավարութիւնը մինաւորիկ, առանց դաշնակցի կը մնայ հոյակապ կղզեացման մը մէջ, շրջապատուած բազմաթիւ անհամբեր, չըսենք նախանձոտ, հակառակորդներէ որոնք ոգի ի բոխն կ'ոգորին աշխարհի մնացեալ մասին տիրանալու համար: Անգլիա տակաւին գերակշիռ է ծովու վրայ: Բայց ցամաքի վրայ, իր զինուորական զրութիւնը կործանած է: Այդ զինուորական զրութիւնը 1872ին հիմնուեցաւ Բրիտանական կայսրութեան պէտքերուն համար, որ սակայն ան ատեն հիմակուրնէ շատ փոքր էր: Անկից ի վեր, Անգլիա այնչափ ընդարձակուած է որ իր բանակը ալ չի համապատասխաներ նոր պէտքերուն, ճիշտ ինչպէս նաև:

տորմը՝ 1884էն առաջ: Անգլիա, կարգ մը հնարքներով, մինչեւ հիմա յաջողած է իր պահպան գորքերը ունենալ իր ամբողջ ստացուածքներուն մէջ, բայց ասիկա խախտած է ամբողջ սկզբունքը որուն վրայ հիմնուած էր դրութիւնը: Մեծցող տղան կապան իրեն յարմարցնելու համար, փէշէն կտրած ու թեւերուն կարած է, բայց այդ միջոցին աղան ալ աւելի հասակ առած է ու հիմակ կապան կարճ կուգայ:

Գալով տնտեսական կացութեան, թէ՛ Անգլիոյ մէջ եւ թէ՛ գուրսը քննչ է ամենէն աւելի աչքի գարնող իրողութիւնը: Սա է թէ անգլիական ճարտարագործութեան եւ առեւտուրին գերազանցութիւնը, այն հիմը որուն վրայ կանգնած է ամբողջ կայսրութեան շէնքը, հիմակ առաջին անգամ ըլլալով ծանրապէս սկսած է վտանգուիլ մէկ կողմէ Գերմանիոյ և միւս կողմէ Միացեալ-Նահանգներուն մրցումէն:

Այս տնտեսական ինչիւրը այնչափ կենսական է որ Պ. Սթէտէն աւելի ծանրանանք սնոր վրայ, — ճշդիւ սնոր համար որ տնտեսական ինչիւրները սկսած են ըլլալ եւ քիչ քիչ պիտի ըլլան միակ առանցքը որուն շուրջը կը դառնայ քաղաքականութիւնը: Գերմանիա, չշատանալով Անգլիան որողել իր ածան ապրանքներով, հետզհետէ զանի կը վանէ այն հրապարակներէն — Հարաւային Ամերիկա և Ծայրագոյն Արեւելք — ուր Անգլիա մինչեւ այսօր անժխտելի եւ միակ տէրն էր: Գործը այնչափ ծանր է որ օր չանցնիս որ անգլիական թերթերու ու հանդէսներու մէջ սուռմասիրութիւններ ու վիճակագիրներ չհրատարակուին՝ անձկութեամբ մատնանիշ ընող Գերմանիոյ կատարած հսկայական յառաջընթացները ճարտարագործութեան մէջ եւ Անգլիոյ տնտեսական շահերուն դէմ մղած յաջող ու արդիւնաւոր կոխը: Իսկ Միացեալ-Նահանգները արդէն շատոնց է որ Անգլիոյ դէմ սկսած են գերազանցութեան կոխը եւ քիչ քիչ կը մօտենան Անգլիոյ, զայն անցնելու հաստատ ու սպահով առաջադրութեամբ: «Ինձինիւրիսկ Մակադին» ի վերջին թիւին մէջ Պ. Հիրամ Մաքսիմ, թնդանօթի գործարանին հոշակաւոր տէրը, կը բացատրէ պատճառները այն անդու յարատեւ ասնձգութեանց զորոնք ամերիկացի գործարանատէրները կը կատարեն կոր այն հրապարակներուն վրայ որոնք մինչեւ հիմա զուտ անգլիական նկատուած էին: Ահաւասիկ իրողութիւններ. «Երբոր գերման կառավարութիւնը սկսաւ բազմհարուածեան հրացան շինել, հրացանաշինութեան մեքենաներ բերել տուաւ՝ ահագին քանակութեամբ՝ Միացեալ-Նահանգներէն: Այս մեքենաներուն գերազանցութիւնը անժխտելի էր: Ասոր հետեւանքը սա է որ Գերմանացիները այսօր ամերիկեան ոճով մեքենաներ կը շինեն կոր ահագին քանակութեամբ. բայց, արտադրութիւնը որչափ ալ ահագին, ինչորանքը ալ աւելի խոշոր է, եւ այսօր Լէօլէ տունը չորս անգամ աւելի ապսպրանք ունի քան ինչ սր կրնայ շինել, եւ սկսած է նոր գործարան մը հիմնել 500,000 ոսկիի արժողութեամբ: Դեռ մէկ քանի տարի առաջ Եւրոպայի մէջ ո եւ մէկը մեքենայի վաճառատուն մը բացած ատեն Անգլիայէն կը գնէր միտաղագսրծ մեքենաներուն մեծաւոյն մասը.

բայց այսօր անգլիական հին, անյարմար եւ բազմատար սուղ մեքենաները հրապարակէն բոլորովին վտարուած են Գերմանիա շինուած ամերիկեան մեքենաներէն: Գերմանացիները ոչ միայն տիրած են այդ հրապարակին, հապա իրենց մեքենաներէն մեծ քանակութեամբ Անգլիա կը զրկեն: Իրաւ է որ այս գերմանական մեքենաները ամերիկեաններուն չեն հաւասարեր. երկաթը այնչափ լաւ չէ, եւ նոյնչափ ճշգրիտ չեն: Եւ սակայն անգլիական սուրբական մեքենաներէն շատ բարձր են, եւ Գերմանիա այսօր Անգլիոյ էն լուրջ մրցակիցն է: Ասիկա կրնայ շատ հաճելի չըլլալ անգլիացիներուն, բայց իրողութիւնը ջնջելով բան մը չի վաստակուիր: Գերմանացի բանուորները, մեծ մասամբ, ժուժկալ ու հաւատարիմ են. փութաջանութեամբ կ'աշխատին օրական տասնըմէկ-տասներկու ժամ, ու անգլիացի բանուորներէն պակաս օրականով կը գոհանան:» Ամերիկացիները ու գերմանացիները կ'անակ կ'անակի տուած՝ Անգլիան վանելու վրայ են ուսական հրապարակներէն: «Ռուսիոյ մէջ ամէն երկրի ապրանքներէն կը գտնուի: Մեծ վաճառական մը ըսաւ ինձի թէ առաջ ամէն բան Անգլիայէն կուգար, «բայց հիմա, ըսաւ, բոլոր ստորին մեքենաները մենք կը շինենք. քիչ շատ աղէկ մեքենաները Գերմանիայէն կուգան. իսկ շատ ընտիր մեքենաները՝ Ամերիկայէն:»

Ուրիշ իրողութիւններ. Ռուսիա երկու հարիւր լոքոմոթիվ կ'ապսպրէ Միացեալ-Նահանգները, որոնք յանձն կ'անեն այդ շոգեկառքերը սուսական հրապարակին յանձնել իրենց անգլիացի կամ գերման մրցակիցներէն աւելի ածան գնով: Լոնտոնի Ստորերկրեայ Ելեկտրական Երկաթուղիի ընկերութիւնը իրեն պէտք եղած նիւթեղէնը Միացեալ-Նահանգներէն կը գնէ: Չինաստան իր երկաթ գիծերը Պեյճիքայէն կը գնէ ու չիմէնթօն՝ Գերմանիայէն: «Թայվայ» ի մէջ անցեալները նամակ մը կար Նիւ-Եորքէն, որ կ'ըսէր. «Անցեալ շաբաթ, ամերիկացի լոքոմոթիվ շինողները 58 շոգեկառքի ապսպրանք ընդունեցան օտար երկիրներէ, որով ընդամէնը վեց ամսուան մէջ 200 շոգեկառքի ապսպրանք եղաւ օտար երկիրներէ: Այս մեքենաներուն մեծ մասը եւրոպական երկաթուղիներու համար է: Անգլիացի լոքոմոթիվ շինողները նուազուրդի մասնակցած էին այս պայմանագրութեանց մեծ մասին համար, բայց Ամերիկացիները ստացան ապսպրանքները, որովհետեւ իրենց գինները աւելի ածան էին:»

Այս ամենէն յետոյ, հասկնալի է անգլիացիներուն իրարանցումը ու ամբողջ տնտեսագէտներուն ու քաղաքական մարդերուն արձակած խուճապի ազդակը՝ արթնցնելու համար անգլիացիները իրենց ծայրայեղ ինքնավստահութենէն ու միջոցներ փնտռելու պահպանելու իրենց տնտեսական գերակշռութիւնը, եթէ տակաւին ժամանակ կայ:

Դառնանք սակայն Անգլիոյ արտաքին քաղաքականութեանը, զոր Պ. Սթէտ արկածալից կը գտնէ: Էն ու շագրաւ դէպքը այսօր, Հնդկաստանի հիւսիսային լեռնալաններուն ապստամբութիւնն է, որ 1857ի ընդհանուր ապստամբութեան ուժգնութիւնը կը յիշեցնէ: Անգլիա

60,000 հոգի բանակ մը զրկեց ապստամբներուն դէմ, ու այսօր ոչ միայն հոն է ուր էր ութ ամիս առաջ, հապաօդին խտուրթեանը պատճառաւ հարկադրուած է նահանջել՝ 500 մետալ ու 1,500 վիրաւորեալ ունենալէ ետքը, ու գարնան վերսկսիլ ամէն բան: Անգլիոյ Էն տկար կողմն Հնդկաստանը, ու չգարմանանք անգլիական քաղաքակա-նութիւնը այլուր այնքան թոյլ գտնելով, բանի որ իր ձեռքերը կապուած են Հնդկաստանի մէջ:

Կը հասնինք Պ. Սթէտի յօգուածին Էն կարեւոր կէ-տին, բացառապէս կարեւոր մեղի համար: Աճա՛ Անգլիոյ գերակշռութեան համար իր մէջտեղ դրած սկզբունքներուն պիտաւորը. «Պէտք է պահենք ինչ որ վաստկած ենք: Մեր ունեցածին բա՛ն մըն ալ չենք ի տար ուրիշներուն՝ մտա-ծելով թէ մարդիկ կան որ կ'ըսեն թէ յօգնած տիրտանը չափէն աւելի բննաւորուած է, կամ թէ որովհետեւ մեր ստացուածքները ձեռք բերած ըլլալու իրաւունքին կամ անիրաւութեան սկզբունքները մէջտեղ կը դնեն: Ս, սիկա անշուշտ ծանր պիտի գայ այն Սնգլիացիներուն որոնք յամառաբար պահանջած են, օրինակի համար, Կիպրոսէն ելլել. բայց, մեր կայսերական եւ գաղթային աշխարհա-վարութեան մասին գրական միաձայնութեան մը սիրուն համար, Կիպրոսը եւրոպական Համաձայնութեան ետ գարձնելու խնդիրքը կարելի է ամենայն արգարութեամբ յետաձգել, մինչեւ որ այդ համաձայնութեան արդիւնքը տեսնենք խաղաղած ու բարգաւաճ Կրետէի մը մէջ: Ե-գիպտոսի պարագան աւելի դժուար է, բայց անոր մէջէն ալ կրնանք ելլել՝ Եգիպտոսէն հեռանալու վերաբերեալ բոլոր խնդիրները յետաձգելով ՄԻՆՉԵՒ ՈՐ ԲԱՂԱ-ՔԱԿԻՐԹ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱՍՏԱՏՈՒԻ ՀԱ-ՅԱՍՏԱՆ:»

Ուշագրութեան առէք այս տողերը: Տարօրինակ խոս-տովանութիւն մը կայ այս հեղինակութեամբ լեցուն տողե-րուն մէջ: Սնգլիա Եգիպտոսէն պիտի չելլէ ուրեմն մինչեւ որ քաղաքակիրթ կառավարութիւն մը հաստատուի Հայաս-տան: Այսպէս ուրեմն Սնգլիոյ եւ մեր շահերը իրարու հա-կառակ կ'ըլլան, եւ, Պ. Սթէտի տրամաբանութիւնը իր ծայրին տանելով, Սնգլիա շահ ունի որ Հայաստան չբարեկարգուի, քանի որ իր Եգիպտոսէն չելլելու պիտաւոր առարկութիւնը պիտի ջնջուէր բարեկարգ Հա-յաստանի մը գոյութեամբ:

Շնականօրէն համարձակ յայտարարութիւն մըն է ասիկա, թէ չէ հաստատութիւն մը արդէն մեր կողմէն սկսած ճշմարտութեան թէ հայկական հարցին մէջ ամէն ոք իր զուտ շահը կը փնտռէ կոր, բացի ենթականերէն, որ մենք Հայերս ենք:

Նոյն քաղաքականութիւնը մեզի նկատմամբ՝ Ռուսիոյ ալ բաժինը չէ: Ս, յ օրերս Ռուսիա իր բոլոր ուժովը կը պնդէ կոր Սուլթանին մօտ որ կրէտէի ընդհանուր կառա-վարիչ ընդունի Բունաստանի Եսթրիոս իշխանը: Սուլ-թանը մինչեւ հիմա կը մերժէ կոր, ան ալ իր բոլոր ու-ժովը: Բայց տեսէք գործին մէկ կերպարանքն ալ. Վիէն-նայէն է որ կը հեռագրեն «Տէյլի Թէլէկրաֆ»-ի. «Կ. Պո-լիս հասած հեռագրերը կը յայտնեն թէ Գիւրտերը ա-ւերիչ արշաւանքներ ըրած են ուստական նահանգներուն գրացի հայ գիւղերուն վրայ, եւ թէ այս յարձակումներուն

և ասոնց փոխարէն Հայերուն վրէժնորդական արարքներուն հետեւանքով՝ բացարձակ անիշխանութիւն մը կը տիրէ ասիական նահանգներուն մէջ: Կը հաստատուի այն լուրը թէ Կ. Պոլսոյ ուստական դեսպանը, Պ. Չինովիէֆ, անձ-նական տեսակցութիւն մը ունեցած է Սուլթանին հետ, որու միջոցին ծանրապէս գանգատած է անոր՝ այս եղե-լութեանց համար, միանգամայն ազգարարելով որ եթէ Թիւրքիա չվերահաստատէ կարգ-կանոնը (՝) ուստական կառավարութիւնը պիտի ստիպուի զինուորական ազգու-միջոցներ ձեռք առնել վերջ մը դնելու համար այն խոս-րութեանց որոնք կը տիրեն կովկասեան նահանգներուն եւ Թիւրքիոյ սահմանագծին երկայնքը: Լաւատեղիակ ահուժներու մէջ սակայն կը յայտարարուի թէ Ռուսիա այս ձեռնարկը ըրած է պարզապէս աւելի ուժով ներգոր-ծելու համար Դրան վրայ, որպէս զի Թիւրքիա աւելի աը-րամազիր գտնայ Ռուսիոյ արդի բազմանքներուն:»

Մեկնութիւն աւելորդ է: Խեղճ Հայկական ինդիք: Սնգլիա իր կողմը կը քաշէ գանի, ու Ռուսիա իր կողմը: Վայ մէջտեղը մնացողին:

Լ. ՉԱՐԹՈՒՄԵԱՆ

Ժ Ա Մ Ա Ն 8

ՏՈՒՄ ՄԸ

Ժամը իրիկուան 9ին մօտ. գրատան սենեակին մէջ պարսկական գորգով ծածկուած սօֆային վրայ երկնցած՝ Տիկինը անգաղղում կը ծխէ ու կը հառաչէ.

— Հոտած թրքահայեր որ մեզ է՛լ ո՛չ փող էք ուղար-կում ո՛չ նստակ. ատր մէկ ամսից աւելի է պօստան մեր դուռը չէ բաղխում. ի՛նչ օրեր, ամէն մէկ ժամին գալիս էր: Տուրսի (*) Դաշնակցականներ որ մէկ գանակ գործածել էլ չգիտեն:

Թաք թա՛ք:
— Ախ, պօստա՛ն է, պօստա՛ն:

Ու Տիկինը վեր կը ցատքէ, կը վազէ դուրս եւ կը վե-րագանայ բարկացած:

— Տուրա՛կներ, «Դրօշակ». փալա՛ս: Ինչ եւ է, աս էլ մէկ բան է. պօստատան մարդիկ չեն մոռանում մեր տունը:

Նորէն կ'երկնայ, կը բանայ թերթը եւ կը սկսի կար-գալ: Յանկարծ սուր ճիչ մը: Ամուսինը որ այդ բոպէն ներս մտնելու վրայ էր, դուռը կը հրէ եւ կուգայ. կինը գետին փռած տեսնելով կը սկսի խնդալ: Կը գտնէ չորս կողմը, ոչ ոք. կը մօտենայ, եւ շոյելով.

— Մաշա (**), արի ե՛լ, ոչ ոք չկայ, ս՛ւմ համար է այդ:

Տիկինը անշարժ. ամուսինը փայփայտնքը շարունա-կելով.

(*) Յիմար, ուսերէն:
(**) Մարիամ, ուսերէն:

—Մաշա, հանաք պէտք չէ, նրանցից (*) ոչ ոք չկայ, ինչո՞ւ համար ես անուս. արի՛, ե՛լ:

Տիկինը անշարժ. ամուսինը ձեռքերը գլխին զարնելով.

—Ա՛խ, միթէ այս անգամ ուզի՞ր է, տասը տարուց յետոյ:

Եւ վրան իննալով.

—Մա՛շա, Մա՛շա, ե՛լ, ե՛լ, ե՛ս եմ, Աւօ՛ղ եմ:

Տիկինը կը շարունակէ անշարժ մնալ. ամուսինը դուրս կը վազէ.

—Արո՛ւթ, Արո՛ւթ:

—Ի՞նչ կայ սր, Պարոն Աւետիս:

—Վազի՛ր, բժի՛շկ կանչիր:

Բժիշկը կուգայ. շփոււմ, կթեր, անօդուս. ամուսինը երկու ձեռքը գլխունը զարնելով.

—Ի՞նչ անել, ի՞նչ անել, ա՛խ դոկտոր:

Բժիշկը հարցումներ կ'ընէ. ուրիշ ատեն ալ պատահած է այսպիսի նուազում:

—Ո՛չ, դոկտոր, ո՛չ, այս առաջին անգամն է:

Արու՛թ քթին տակէն ծիծաղելով, ինքնիրենը.

—Երբ անոնք հոս էին, շաբաթը մէկ երկու անգամ կը պատահէր. ամենքս ալ զիտէինք թէ ձեւացում էր:

Ամուսինը եղերական շեշտով.

—Արո՛ւթ, ասա՛, ի՞նչ անել, քեզնից զատ մարդ չունենք, արի՛ մէկ խրատ տուր:

Արու՛թ քանի մը ըսպէ մտածելէ յետոյ.

—Պարոն Աւետիս, բան չի կայ վախնալու, ես տիկինը շուտ կը սթափեցնեմ:

—Ի՞նչ ես ասում, Արու՛թ:

—Քիչ մը ստակ տուր:

—Փո՛ղ, փո՛ղ. ատր դու էլ մե՞զ շահագործում ես այս ըսպէիս:

—Ո՛չ, Պարոն Աւետիս, ո՛չ, ինձի համար չեմ ուզեր, տիկինը զեղ պիտի ընեմ, կը վերադարձնեմ:

—Փո՛ղ, փո՛ղ, մէկ հոգուս փոխանակ միւսը:

Պարոն Աւետիս զրպանէն պանքնոթ մը կը հանէ:

—Ո՛չ, Պարոն Աւետիս, թուզթ ստակ չեմ ուզեր. շիլին, բէնի, մէկ ափ կը բաւէ:

Պարոն Աւետիս կ'երթայ վերէն ափ մը պղինձ ստակ կը բերէ եւ կուտայ Արու՛թին, ու ինք դառնալով բժշկին որ ապշած կը զիտէր, կ'ըսէ.

—Տեսնենք, իր երկրին մէկ զեղն է անելու:

Արու՛թ ստակները կը լեցնէ ձախ ափին մէջ, աջն ալ կը գոցէ վրան, եւ ոտանալով տիկինը գլխուն կը սկսի կամացուկ կամացուկ ափերը շարժել: Քանի մը ըսպէ ետքը անշնչացեալ սարմինը երեքսուրթի նշաններ կուտայ. ամուսինն ու բժիշկը բերանաբաց կը սպասեն: Արու՛թ աստիճանաբար կը սաստկացնէ զղրոցը, եւ անկենդան մարմինն ալ աստիճանաբար կը սթափի. վերջապէս աչքերը կը բանայ, եւ դեռ կիսախուփ, կը մրմնջէ իբր երազի մէջ.

—Ա՛խ, փողի ձայն, փողի ձայն. Ամերիկայից է, պօստան եկել էր:

Ամուսինը կը վազէ քովը կ'երթայ, կը համբուրէ:

(*) Նրանք, զրանք, այսինքն Հնչակեանները:

—Արի՛, Մաշա, արի՛, հոգեա՛կս, ե՛լ, ե՛լ, հոգս մի՛ քաշիր. նորից փողերը պէտք է մեզ դան: Չեո յիշում Չանգուլուն ի՞նչ ասացինք, նա ի՞նչ յոյսեր տուեց մեզ:

Տիկինը սերտ առած կ'իլլէ կը նստի գետինը, ուր սր ինկած էր նուազկոտ, քնածուծեմնէ արթնցողի մը պէս: Ամուսինը սիկարէթները կը շոյլէ: Բժիշկը կը մեկնի: Արու՛թին հրաման կը տրուի նստելու, մատուցած ծառայութեանը փոխարէն:

—Արո՛ւթ, նստի՛ր:

Արու՛թ կը նստի: Պարոն Աւետիս ծիծաղելով.

—Տօ՛ Արու՛թ, դու խօմ պիտի սուրդ ես եղել:

—Աս ի՞նչ բան է, Պարոն Աւետիս:

—Վօ՛տ տուրակ, վրայ կը բերէ տիկինը, այսքան ժամանակ մեզ հետ ես եւ դեռ հայերէն չես սովորել: Պսիխոլոգ, զրան դուք ասում էք հոգի, հոգեբան, այսպէս մի բան. նրանցից եմ լսել:

—Արո՛ւթ, դու ո՞ր տեղից այդ մտածեցիր:

—Պարոն Աւետիս, ես Ամերիկայէն սորվեցայ ասիկա:

Տիկինը նորէն մարմուրի նշաններով կը հառաչէ.

—Ա՛խ, Ամերիկա՛, Ամերիկա՛. մեր փողերը նրանք են անուս, դաւաճանները:

—Ի՞նչպէս թէ Ամերիկայից. նրանք ո՞ր տեղից էին իմանում մեր գաղտնիքները. քո այն տեղ եղած ժամանակ Սուրէնը այնտեղ չէր. գաղտնի թղթակցում էր դաւաճանը:

—Ո՛չ, Պարոն Աւետիս, ուրիշ բան է, պատմում:

—Պատմի՛ր:

—Գիշեր մը թատրոն էի գացեր...

—Ի՞նչպէս թէ թատրոն էիր գնացել, կը կոչէ տիկինը. կուտակցութեան փողովը դուք զուարճանում էք:

—Ո՛չ, տիկին, ես իմ աշխատութեանս ստակովը գացեր եմ:

—Եթէ որ աւելորդ փող ունէք պէտք է կենտրոնիս ուղարկէք:

—Բայց, տիկին, դուք ամէն իրիկուն կ'երթաք:

—Վօ՛տ տուրակ, այդ մեր փողն է:

Արու՛թ քթին տակէն խնդալով.

—Խնդրեմ, տիկին, խօսքերս մի՛ կարէք եթէ կ'ուզէք որ ամբողջապէս պատմեմ: Կը տեսնէք որ եթէ այդ գիշեր թատրոն գացած չըլլայի, այս գիշեր պիտի չի կրնայի ձեզի սթափեցնել:

—Պատմի՛ր, Արու՛թ, պատմի՛ր, ըսա խնդալով Պարոն Աւետիս:

—Գիշեր մը թատրոն գացեր էի, շարունակեց Արու՛թ, բեմին վրայ ձի մը բերին, ծեր ձի մը. գործը լմայնելէն ետքը ա՛լ ես չէր դառնար. ինատը բռնած էր, տեղէն չէր շարժեր. ի՞նչ ընել. ի՞նչ որ ըրին անհնարին եղաւ հեռացնել ձին, անշարժ կը մնար. մէյ մըն ալ տեսնես դերասանին մէկը դուրս ելաւ ու վերադարձաւ խոշոր դանդակով մը զոր սկսաւ զարնել. ձին անմիջապէս շարժեցաւ, տեղէն ելաւ եւ քալեց:

—Այդ ի՞նչպէս:

—Ատենօք թրամուէյի ձի ըլլալուն զանգակի ձայնը լսածին պէս կը շարժի եղեր. սովորութիւնը շանհեանար,

երբ հիմա այս շնորհն ալ լսեց՝ մէկէն ի մէկ վեր ցատ-
րեց: Երբ ես ալ տիկինը տեսայ անշարժ և ինչ որ կ'ընէիք
տեղէն չէր կլլեր, յիշեցի այդ ձին...

— Լոբր, անպիտան, տիկնոջը ձիու հետ ես համե-
մատում:

— Քաւ լիցի, Պարոն Աւետիս, այդ բոպէին յիշողու-
թիւնս կը պատմեմ. ըսի ինքնիրենս. Ի՞նչ ձայնի տիկինը
շատ վարժած էր ատենօք, ո՞ր ձայնը ամենէն աւելի կ'ազ-
դէր իր վրայ, զրամի ձայնը...

— Ա՛խ, գաւաճանները, հառաչեց տիկինը:

— Մէկ փորձեմ ըսի ձիուն պէս. վարժած ձայնը
կրնայ ջիզերուն վրայ ազդել եւ տիկինը շարժեցնել, եւ
տեսաք որ յաջողեցայ, տիկինն ալ ահա տեղէն ելաւ:

Էրիկ-կնիկ տխուր ժպտով մը.

— Լոբր, անպիտան, լոբր:

— Արդէն վերջացաւ:

— Լա՛ւ, լա՛ւ: Մաշա, հագեակս, արի Ի՞նչ պատա-
հեցաւ:

— Ա՛խ, մի՛ հարցնէր, Աւետիս:

— Դրանք նորեց շատ փո՞ղ են առել:

— Այդ ոչինչ:

— Ի՞նչպէս այդ ոչինչ. այսուհետեւ աւելի Ի՞նչ մեծ
զբաղդութիւն կրնայ պատահիլ մեզ հետ:

Տիկինը որ դեռ գետնը նստած կը ծխէր, քովէն
հանեց «Դրօշակ»ը եւ քանի մը տող մատնանիչ ընելով
ամուսնին տուաւ որ կարգայ: Անոր ալ ձայնը կը դողդղայ,
ձեռքերը կը թուլան, թերթը վար կ'իյնայ:

— Ա՛խ, Մաշա, ա՛խ:

— Հասկանո՞ւմ ես:

— Հասկանո՞ւմ եմ, հասկանում:

Պարոն Աւետիս սակայն կարծես չուզեր հաւատալ
կարգացածին. կը սիրէ յուսալ թէ սխալեր է. բարձրա-
ձայն կրկին կը կարգայ «Դրօշակ»ի այդ մահահոտ տու-
ղերը.

«Մենք տեսել ենք զիւզացիներ, որոնք քրդերի յար-
«ձակումների դեմ պաշտպանուելու համար Դաշնակցու-
«թեան կողմից իրենց տրուած զէնքերը նոյն այդ քրդե-
«րին են ծախել. տեսել ենք ուրիշներին որոնք մեր արիւն-
«քրայինքով պատրաստած ու տեղ հասցրած հրացանները
«Չրհոր են թափել քրդերի երեւնալուն պէս. մեր հարիւ-
«րաւոր ուղերը, որ օգոստոս Վէին, ժողովրդի պաշա-
«պանութեան համար բաժանուած էին, կամ անպէտք
«մնացին կամ — աւելի վատ — ծովը ձգուեցան:»

— Ա՛խ, Մաշա, ա՛խ, Մաշա, տեսնո՞ւմ ես, մենք
Ի՞նչպէս այդ խելքը չարեցինք, մենք Ի՞նչպէս նրանց չա-
սացինք. «Պարոններ, հաշիւ էք պահանջում մեզնից,
ահա՛, 50,000 հրացան ենք բաժանել...»

— Աւետիս, հարիւր հազար ասա՛, հարիւր հազար.

— Լաւ, Մաշա, հարիւր հազար, հարիւր յիսուն հա-
զար, երկու հարիւր հազար, ո՞րքան կամենում ես...

Տիկինը ցնծագին կը ծափէ:

— «Երկու հարիւր յիսուն հազար հրացան ենք ու-
զարկել վա՛ն, և նրանք վանեցիկները մեր արիւնքը արիւնքով

պատրաստած ու տեղ հասցրած հրացանները վա՛նի լինն
են թափել:»

Տիկինը ցնծագին կը ծափէ:

— Խարաշօ՛, Աւետիս, խարաշօ՛:

Կնիկանը քաջալերանքներէն բուրբուրած՝ Պարոն Ա-
ւետիս սաքի կ'ելլէ, իբր թէ ժողովին՝ մէջ ասանաբանէր.

— Հաշիւ էք ուզում, պարոններ, հաշիւ. ահա՛,
փոխանակ Լոնդոնում՝ հաշիւ փնտոելու, դուք էլ մեզ չափ
անձնագոհ եղէք ու գնացէք (աջ բազուկը տարածելով)
հաշիւը փնտոեցէք՝ վանայ ըծումը:

Տիկինը ինքնիրմէն գուրս ելած կը ծափէ. Արութ կը
շարունակէ քթին տակէն քրմծիծաղը. ասանաբանը աւելի
եւ աւելի ոգեւորուած առաջ կը սանի խօսքը.

— Հաշիւ էք ուզում, պարոններ, հաշիւ. լա՛ւ, ահա՛:
Այդ հրացանների համար մենք ծախուել ենք 500000 սոկի:

— Մէ՛կ միլիոն ասա՛, Աւետիս, մէկ միլիոն:

— Մենք ծախուել ենք երկու միլիոն՝ սոկի...

Տիկինը խանդավառ կը ծափէ. Արութ կը շարունակէ
քթին տակէն քրմծիծաղը:

— Ո՞ր տեղից այդ գումարը, հապա այդ չէ՞ք հարցա-
նում. այո՛, չէք հարցանում: Իմ պապերիս իշխանական
ժառանգութիւնից, Սմբղանտում, Մանչուրուում, Բօրթ-
Արթուրում ունեցած իմ կալուածներից:

Տիկինը ա՛լ չի վիճանար, գետնէն կ'ելլէ եւ կը համ-
բուրէ էրկիւր:

— Ա՛խ, Աւետիս, Ի՞նչ հիանալի գիւտեր ես տնում:

Արութ քթին տակէն միշտ՝ քրմծիծաղով եւ կամա-
ցուկ մը ինքնիրենը.

— Ափսոս որ քիչ մը ուշ մնացիր, առաջութիւնը
«Դրօշակ»ը խլեց:

Ասանաբանը կը շարունակէ.

— Ահա՛ հաշիւը. մի քիչ անձնագոհ եղէք եւ գնացէք
սուղեցէք. ահա՛ իմ անձնագոհութիւնները:

— Հապա ես, Աւետիս, հապա՛մս, ինչ մտանում ես:

— Ո՛չ, Մաշա, ո՛չ:

Շարունակելով.

— Կինս ու ես այս ահագին զոհողութիւնները արել
ենք ձեզ թրքահայերի...»

— Հոտա՛ձ թրքահայերի պաս՛, Աւետիս, հոտա՛ձ
թրքահայերի:

Արութ քթին տակէն մրթմրթալով.

— Բայց ձեր ու ձեր երախաներու ոսկորները այդ
հոտածներու հացովն է շինուած:

— Հոտած թրքահայերի՞ մեզ տուած՝ քսան հազար
ոսկուն վերայ մենք աւելցրել ենք երկու միլիոն ոսկի:
Ահա՛ հաշիւը, ահա՛ անհերքելի փաստը թէ դուք Նազը-
մական էք: Կորէ՛ք:

Տիկինը կը ծափէ որոտընդոտ. ասանաբանը՝ յոգնած
կը նստի. նորէն տխրութիւն:

— Ա՛խ, Աւետիս, ա՛խ, Ի՞նչպէս խայտառակաբար
պէտք էր դուրս ելլէին նրանք:

— Տեսնում ես, Մաշա, այդ սուրակ՝ «Դրօշակ»ը

մեր իրաւունքը մեզինց խլեց: Այժմ նա է որ հաշիւ պահանջողներին պէտք է ասէ. « Հաշիւ էք ուզում, պարպեցէք ջրհորները եւ պիտի գտնէք յատակոււմ: Հաշիւ էք ուզում, ցամքեցուցէք ծովերը եւ ներքեւը պիտի գտնէք: » Էջ մենք ի՞նչ նոր բան պէտք է ասենք, Մաշա:

— Սխր, Աւետիս, այդ տուրակները ո՞ր տեղից են ստորել այդ խելքը:

— Ես ի՞նչ գիտեմ, Մաշա, Կարլ Մաքսում էլ պէտք բան չի կայ:

Ս. Բուլթը քթին սակէն քմծիծաղով.

— Պարոն Աւետիս, ես գիտեմ թէ ո՞ր տեղէն ստորելեր են այդ խելքը:

- Ո՞ր տեղից, ո՞ր տեղից:
- Ո՞ր տեղից, ո՞ր տեղից:
- Պ. Ս. ...

Տիկինը զայրապին.

— Ս. Բուլթ, խօսքդ միշտ Աւետիսին ես ուզում. միթէ ես կենարօն չե՞մ:

- Ս. Բուլթ, ինչո՞ւ ես տիկնոջը մոռանում:
- Լա՛ւ, Տիկին Մարօ եւ Պ. Ս. Աւետիս ...

Տիկինը ուրախութեան նշաններ կը յայտնէ: Արութ շարունակելով.

— « Դրօշակ » ի խմբագիրները այդ խելքը ստորելեր են Եղանակ Բիւզանդեանէն:

- Ի՞նչ, այդ ի՞նչ բան է որ:
- Գիրք մըն է, ութսուն տարի առաջ վիեննայի տըպուած. մեր երկիրը այդպէս գրքեր կը կարդանք:
- Այդ ի՞նչ բան է որ ութսուն տարի առաջ գրում է « Դրօշակ » ի այդ գիւտը:

— Տիկին, ինչպէս որ ես յիշելով Ամերիկայի ձին ...

— Սխր լո՛ւր, լիբէ խօսքեր մի՛ ասիր:

Ս. Բուլթ անտարբեր կը շարունակէ.

- Ինչպէս որ ես յիշելով Ամերիկայի ձին, անմիջապէս սաածեցի տիկնոջ վիճակը ...
- Հասկանում եմ, անուղիտայով:
- Ս, ա չի գիտեմ ի՞նչ բան է: « Դրօշակ » ի քով դաւառացի տղայ մը կայ, ան կարդացած է Եղանակ Բիւզանդեանը եւ ստորկեցուցեր է:

— Աս ի՞նչ գրուածք է, պատմի՛ր:

— Ո՞ր մէկը ըսեմ: Հին ատենները քաղաքի մը մէջ շատ իմաստուն մարդ մը կայ եղեր, շատ ալ զօրաւոր թագաւոր մը որ կ'ուզէ փորձել իմաստունը: Օր մը անիկ կը կանչէ եւ կ'ըսէ. — « Իմաստուն, աշխարհիս կեդրոնը ո՞ր տեղն է: » Իմաստունը պատասխանելու հասար օր մը ժամանակ կ'ուզէ, միւս օրը գարով կ'անէ թագաւորը կը տանի պարտէզ մը, կը կայնեցնէ հոն եւ կ'ըսէ. « Այս տեղն է կեդրոնը: »

- Մենք կենարօնս ...
- Ո՛չ, տիկին, աշխարհի կեդրոնը:
- Ուրիշ կենարօն էլ կայ. այդ Նալլուրի մեքենայութիւնն է:

Ս. Բուլթ ինչպիսի կը շարունակէ.

— Թագաւորը չի հաւտար, եւ պայտօյց կ'ուզէ. իմաստունը կ'ըսէ. « Կարկին մը ա՛ն եւ չափէ՛, ճիշդ կեդրոնը պիտի գտնես: » Պարոն Ս. ... ա՛խ, տիկին Մարօ եւ պարոն Աւետիս, միթէ այդ բանը կարելի՞ էր ընել. ո՛չ. ու-

րեմն ինչո՞ւ իմաստունը սաախօս պիտի համարուի, երբ թագաւորը չի կրնար ճշգիւ անոր ըսածը:

Էրեկ կնիկ մեյամաղձօրէն կը ժպտին: Արգիթ կը շարունակէ.

— Թագաւորը նորէն կը կանչէ իմաստունը եւ կը հարցընէ թէ աշխարհիս շուրջը ո՞րքան տարածութիւն ունի: Իմաստունը կրկին մէկ օր ժամանակ կ'ուզէ, եւ յաջորդ օրը կուգայ, հետն ալ ահապէն կապոյցներով դերձան: « Այս դերձանները քովէ քով գնելով աշխարհիս շուրջը կրնաս չափել, կ'ըսէ թագաւորին. այսքան է ահա: » Միթէ կարելի՞ էր այս բանս. ո՛չ. բայց իմաստունը ինչո՞ւ յանցաւոր ըլլայ եթէ թագաւորը ինք չէր կրնար ճշգիւ անոր ըսածը: Ս, յ դաւառացի վարժապետը այդ բաները պատմեր է անոնց, յիշեցնելով նաեւ Աստուածաշունչին « Անգունդին խորը ո՞վ քննեց » ը: Եւ ինչպէս ես ձիւն տիկինը յիշեցի, անոնք ալ այսպէս նմանութիւն ըրեր են: Եթէ երկրին բոլորը կարելի չէ չափել, միթէ ծովուն յատակը կարելի է քննել: Ինչո՞ւ յանցաւոր ըլլան « Դրօշակ » ի խմբագիրները եթէ ժողովուրդը չի կրնար ծովուն յատակը նայել թէ իրա՛ւ ումը, հրացան կա՞յ թէ ոչ:

Էրեկ կնիկ բարկանալով կը վազեն Ս. Բուլթին վրայ:

— Որ դուն այդ ամէնը գիտէիր ու մեզ չասացիր. մեր հա՛ցն ես ուտում:

Ս. Բուլթ գլուխը հակած, ձեռքերը բանալով.

— Տիկին Մարօ, Պարոն Աւետիս, դուք իս ընդհանուր ժողովի անդամ նշանակեցիք եւ « Հնչակ » ի մէջ ալ հրատարակեցիք. յետոյ ըսիք թէ կեդրոնին ալ անդամ եմ. բայց օր մը օրանց ինձի բան մը հարցուցիք. առաջուան պէս նորէն ես շարունակեցի կերակուր եփել եւ երախաներուն շորերը լուալ ...

Պարոն Աւետիս կրակ կտրած վրան կը վազէ.

— Լո՛ւր, դաւաճան, որ այդ բաները գիտէիր ու մեզ չասացիր որ մենք առաջ անցնէինք եւ փրկուէինք: Նազը մը քեզ ուղարկել է մեզ մօտ որ այդ բաները մեզ չասես. կորի՛ր մեր անից ...

Կնիկը մէկ կողմ աննելով կ'ըրի.


— Սխր, Աւետիս, ի՞նչ ես անում. թող նա մեզ մօտ մնայ. եթէ նա էլ գնայ, էլ ես որք կենարօն պէտք է լինիմ:

ՍԿԵՊՏԻԿ

ՀԱՍՏԷ ՈՒ ԲԱԺՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵՍՆԵՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.



ՆՈՐ ԿԵՍՆԵՔԻ բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ս. մերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15 ին: Ս. րեւելքի համար (Պուլկարիա, Ռուսմանիա, Յուստան եւ այլն) կը ինչպիսի սոկի ֆրանքով հաշուել բաժնեգինը: